

Կիպրահայ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՆԻԿՈՍԻՈՅ ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Իմաստալից աւանդութեամբ մը, Վարդանանց յիշատակը ամէն տարի կը տօնակատարուի Նարեկ վարժարանէն ներս՝ գեղարուեստական հանդիսութեամբ մը, պանծացնելու համար Սրբոց Վարդանանց սխրագործութիւնը, անգամ մը եւս ներշնչուելու համար Աւարայրի ոգիով եւ անոր բազմախորհուրդ պատգամով՝ «Մահ իմացեալ անմահութիւն է»:



Այս տարի Վարդանանց հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 12 Փետրուար 2015, կ. ա. ժամը 8:30-ին, վարժարանի հանդիսասրահին մէջ, ներկայութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Նարեկ Արք. Ալեմեգեանի, Արժանապատիւ Տէր Մոմիկ քինյ. Հապէշեանի, Հոգաբարձական Մարմնի Ատենապետ Պրն. Վարդան Թաշճեանի, Փոխ-ատենապետ Պրն. Սեպուհ Դաւիթեանի, Տիկ. Մակի Մահտեսեանի եւ բազմաթիւ ծնողներու եւ հիւրերու:

Բացման խօսքով հանդէս եկաւ Տիկ. Մակի Էսկիճեան, որ ապրումով եւ տպաւորիչ մեկնաբանութեամբ արժեւորեց օրուան խորհուրդը, շեշտելով յատկապէս որ Վարդանանց տօնը միշտ ալ այժմէական կը մնայ, որ Վարդանը միշտ ալ կ'ապրի մեր մէջ, քանի կա՛յ հայութիւնը՝ իր մայրենի լեզուով, իր կրօնքով, հայրենեաց հողով, քանի կա՛յ հայ դպրոցը,



հայ եկեղեցին....Վարդանանց ոգին միշտ ալ արթուն ու մշտաբարձ մնաց հայութեան մօտ, ընդգծեց ան, դարերու ընթացքին, Սարդարապատէն Արցախ, մեր հերոսներու եւ քաջ որդւոց մէջ....Այսօր ալ, շարունակեց ան, Յեղասպանութեան 100-ամեակին, այդ ոգին եւ գիտակցութիւնը կը մնան անշեջ, եւ մենք յաղթանակելու ենք, քանզի՝ մէջբերելով Խորենացիի յայտնի

խօսքը, «Ո՛չ է պատմութիւն ստոյգ, առանց ժամանակագրութեան», կամ «ոչ է պատմութիւն ստոյգ, առանց ապացոյցի», իսկ Յեղասպանութեան փաստերը խօսուն են ու պերճախօս, նշեց յարգելի բանախօսը: Վարդանանց խորհուրդը, շեշտեց Տիկ. Էսկիճեան, նոր թափ ու

նզի կու տայ մեր Պահանջատիրական պայքարի կամքին, մեր լեզուին, հողին, ազգային սրբութիւններուն կառչելու գիտակցութեան, նաեւ մեր միասնականութեան հրամայականին, որ «միակ ելքն է հասնելու համար համահայկական յաղթանակի», նշեց ան: «Մենք... դուք... անոնք, մեզի ծանօթ քերականութիւնը պէտք է դադրի գործելէ արդ: Մեր միակ ուղին միասնականութիւնն է, որ միակ ելքն է հասնելու համահայկական յաղթանակի: Եւ մեզի... այս հանգրուանին, յաղթանակել է պէտք, այդ ուղիէն միասնաբար, համաչափ քայլերով յառաջանալով որպէս մէկ մարդ.... Խօսքս համայն հայութեան մասին է: Օ՛ն ուրեմն, դէպի Մեծ Եղեռնի հարիւրամեակ, առօրեայ Աւարայրով, դարեր առաջ ստեղծուած հայու ոգիով... Հայկի, Վարդան Մամիկոնեանի, Մոնթէ Մելքոնեանի... Հրանդ Տինքի աննկուն ոգիով», եզրակացուց իր խօսքը Տիկ. Էսկիճեան:



Այնուհետեւ, դասարան առ դասարան, ոգեշունչ բանաստեղծութիւններու ասմունքներով, ինչպէս՝ «Զօն Վարդանանց» (Բ. Մանկապարտեզ), «Հայ Տղայ» (Նախապատրաստական), «Հայու Ոգին» (Բ. Միջնակարգ), «Վարդանանք» (Բ. Դասարան), «Հայրենասիրական Վարդան» (Գ. Դասարան), «Քաջն Վարդան

(Ա. Դասարան)՝ Նարեկի ամբողջ աշակերտութիւնը պանծացուց Վարդանանց վսեմ յիշատակը, յուզելով եւ հայրենասիրական վառ ապրումներով համակելով ներկաները:

Խորապէս գնահատելի էր յատկապէս Տիկ. Մակի Էսկիճեանի պատրաստած եւ բեմադրած թատերական ներկայացումը՝ «Խոստում Վարդանանց», կատարողութեամբ Դ., Ե. եւ Զ. Դասարաններու աշակերտութեան, ուր դերակատար աշակերտները հարազատօրէն կրցան ներկայացնել Վարդանի, նախարարներու, Վասակի, Յազկերտի եւ Փափկասուն Տիկնանց կերպարները:

Հանդիսութեան աւարտին, վարժարանի Երգչախումբը, խմբավարութեամբ Պրն Սարգիս Տէմիրճեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Երեցկին Թամար Հապէշեանի, խմբերգեց՝ «Շաւարշանի Քայլերգ»ը եւ «Կարմիր Վարդան»ը, ներկաներուն խանդավառութիւնը հասցնելով իր բարձրակետին:

Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանի շնորհակալական խօսքէն ետք, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Կիպրոսի Մարմնի Ատենապետ, Պրն. Սեպուհ Դաւիթեան, տնօրէնութեան հրաւերով, խօսք առաւ բացատրելու համար Հիմնադրամի յոյժ կարեւոր աշխատանքը՝ մեր հայրենի քոյրերուն եւ եղբայրներուն կեանքի բարելաւման ուղղութեամբ, մասնաւորելով այն պարագան որ Նարեկ վարժարանը միշտ ալ իր գնահատելի լուման ներդրած էր այս հայրենասուէր գործին եւ կարդաց այդ առիթով

հայրենիքէն ուղարկուած շնորհակալագիրը՝ Նարեկի աշակերտութեան: Ան յոյս յայտնեց որ ներկայիս եւս վարժարանը պիտի շարունակէր իր փոքրիկ բայց խորհրդանշական մասնակցութիւնը բերելու Հիմնադրամի հանգանակութեան, հայրենասիրական ոգիով եւ գիտակցութեամբ:

Գնահատելի ձեռնարկ մը՝ արդարեւ, որ մանուկներու եւ պատանիներու բերնով եւ մասնակցութեամբ յատկապէս, եկաւ նորովի իմաստաւորելու Վարդանանց խորհուրդն ու ոգին Աւարայրեան, նորովի մկրտուելու անոնց ազգային գիտակցութեան եւ արժանապատուութեան, հայեցի լինելութեան աւագանին մէջ:

Ե. Գ.

(Ստորեւ կու տանք՝ փոքր յապաւումներով, Տիկ. Մակի Էսկիճեանի բացման խօսքը՝ արտասանուած Վարդանանց յիշատակին նուիրուած Հանդիսութեան, Նիկոսիոյ Նարեկ վարժարանի հանդիսասարահին մէջ):



Գերաշնորհ Սրբազան Հայր,

Արժանապատիւ Տէր Հայր,

Մեծայարգ Ատենապետ եւ անդամներ Նարեկ Վարժարաններու Հոգաբարձութեան,

Ազնուափայլ Տնօրէնուհի,

Ազնուափայլ Տիկին Մահտեսեան,

Յարգելի հիւրեր, ներկաներ, պաշտօնակիցներ,

Սիրելի ծնողներ,

Թանկագին աշակերտներ եւ աշակերտուհիներ,

Վարդանանց է դարձեալ: Ազգային հպարտութեան օր: Վարդան Մամիկոնեանը եւ հայ քաջերը բոլոր, փառաբանելու եւ մեծարելու ոսկի առիթ:

Այս տարի յատկապէս Վարդանանցը յատուկ իմաստ ունի եւ յոյսով եմ, որ կը ստանայ պէտք եղած կարեւորութիւնը յատկապէս այն գաղութներէն ներս, ուր հայ կայ:



Վարդանանցը երբեք չի կորսնցներ իր թարմութիւնն ու այժմէականութիւնը, որովհետեւ յաւերժ մղուող ճակատամարտ մըն է... առօրեայ պայքար, լինելութեան վճռականութիւն:

Դարեր անցած են Վարդանանց ճակատամարտէն մինչ այսօր, սակայն մեր հերոսներու հեղած արիւնը կը շողայ մեր աչքերուն, ալ ու ալուան կակաչներով, որոնք կը զարդարեն Աւարայրի դաշտը, մեզի յուշելով որ հո՛ն կը հանգչի հայու անպարտ ոգին, որ թելեր առնելով հասաւ մինչեւ Գեորգ Մարգալետունի, շրջելով այն համոզումը, թէ՝ «Մէկ ձեռքը ծափ չի տար, մէկ ծաղիկով զարուն չի գար...»: Ազգային գիտակցութիւն ունեցողը, սիրելիներ, մէկ ձեռքով ալ ծափ կու տայ, մէկ ծաղիկով ալ զարունը կ'աւետէ:

Վարդանանց ոգին ու գիտակցութիւնը չէի՞ն միթէ, որ առօրեայ օրինակ ծառայեցին իւրաքանչիւր հայու, կառչելու իր Մայրենիին, հողի սրբութեան ու եկեղեցիին: Ահաւասիկ պատասխանը, թէ ինչո՞ւ կը գոյատեւենք այսօր որպէս ազգ, հակառակ որ վեց յաջորդական դարեր զուրկ մնացինք պետականութենէ, դառնալով համեղ պատառ մը օտար ազգերու անյագ երախին: Սակայն գոյատեւեցինք... յանուն մեր հաւատքին եւ գիտակից հերոսներուն, որոնք կերտեցին մեր պատմութիւնը լուսաշող:

Նոյն ոգին եւ ազգային արժանապատուութիւնը վերստին յառնեցան Մեծ Եղեռնի սեւ օրերուն, երբ թուրքը կը ճգնէր յաջողութեամբ պսակել բանթուրանական ծրագիրը: Միլիոնաւոր անգէն եւ անմեղ հայեր մերժեցին դրժել իրենց կրօնը, ժխտեցին օտարացման գաղափարը, հակառակ որ իրենց կեանքերը պիտի փրկէին թրքանալով: Եւ ահա դար մը ետք կը լսենք նահատակներուն ճիչը, որ կ'աղաղակէ մեր ականջներուն... ըսելով. «Մահ իմացեալ անմահութիւն է»: Թող այրեն Նահատակաց յուշարձանները բոլոր, թող քանդեն մեր մատուռներն ու տաճարները... մէկ միլիոն ու կէս նահատակներու անթաղ աճիւնները ինքնին կը վկայեն դարձ մը ի վեր յեղաշրջուող պատմութեան ճշգրտութիւնը: Մեր Պատմահայր, Քերթողահայր Մովսէս Խորենացին կը գրէր. «Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան»: Եթէ ժամանակին թուականը կը փաստէր դէպքերու ճշգրտութիւնը, այժմ փաստերը կրնան վկայել դէպքերու ճշմարտացիութիւնը: Ուրեմն մենք կ'աւելցնենք նորագոյն պատմութեան պահանջները, ըսելով. « Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ապացոյցի»: Ճշմարիտ ապացոյցներով պիտի հետապնդենք մեր արդար դատը... որ մեր բոլորի ճիտի նուագագոյն պարտքն է որպէս հայ, մէկդի դնելով անհատական շահերն ու գաղափարական մոլութիւնները:

Նոյն ոգին հասաւ մինչեւ Արցախ... ուր դեռ մեր խիզախ հայորդիները կը ճգնին ամէն գնով Անկախ պահել մեր պապենական հողերը: Երկրորդ Աւարայր մը, սակայն անաւարտ ճակատամարտ:



Իսկ հիմա մենք կանգնած ենք Մեծ Եղեռնի հարիւրամեակի սեմին: Ո՛չ Վարդան Մամիկոնեան եւ ո՛չ ուել նահատակ մեզմէ հաղէսներ կամ մեծարանքի խօսքեր կ'ակնկալէին, երբ անոնք կերտեցին մեր սեփական պատմութիւնը, որ դժբախտաբար պէտք եղած ձեւով չ'արժեւորուիր հայուն կողմէ:

Մեր ազգը մեծով ու փոքրով կարիքն ունի ազգային գիտակցութեան եւ ազգային արժանապատուութեան: Մեր անցեալի հերոսները, մեր Ոսկեղնիկն ու մեր աննման գրական գոհարները եթէ փոշոտին,, ա՛յն ատեն միայն մեր ազգը կը մեռնի: Սակայն մենք կ'ուզենք, որ մեր ազգը ապրի եւ պահէ քարտեզին վրայ իր վեհ դիրքը, խրոխտ լեռներու շուրջապարը վերածելով համազգային խնճոյքի, որպէսզի հայկական արեւը յաւէտ շողայ երկնականարին վրայ եւ հայորդին դառնայ արժանաւոր հետեւորդը Վարդաններու, ինչպէս նաեւ հայ շինականին, որ արեան գնով պաշտպանեց հայրենիք կոչուած սրբութիւնը: Քանի որ... բոլորս քաջ գիտենք, ո՛չ հայրենիք, ո՛չ կրօն եւ ո՛չ ազգութիւն կը նուիրուին օտարին:

Այսուհետեւ ամէն օր թող Աւարայր ըլլայ անկախ այն իրականութենէն թէ Եղեռնի հարիւրամեակ է կամ ոչ... քանի որ ճգնաժամ է... ճգնաժամ:

Օտարը կը հիանայ մեր պատմութեամբ, մշակոյթով եւ ազգային ժառանգութեամբ: Մեզ կը յարգէ յատկապէս երբ մե՛նք կը յարգենք մեր ազգը: Ճիշդ այդ պատճառով նոյն ինքն Յակոբ Բ., Աւարայրի ճակատամարտէն ետք դադրեցուց իր ճնշումները եւ հայերը ազատ թողուց դաւանելու քրիստոնէական կրօնը եւ գոյատեւելու որպէս հայ:

Այս յաղթանակը կը տօնենք մենք այսօր... Մեծ Եղեռնի հարիւրամեակի նախօրեակին: Իսկ մենք, անմահ Նարեկացիի սաներս, Նարեկ Վարժարանի բեմէն կը միացնենք մեր ձայները համայն աշխարհի հայութեան, վերակենդանացնելով մեր նախնիներու ոգին, որոնք կը զգաստացնեն մեզ, ըսելով. «Զարթի՛ր, լաօ... մըռնի՛մ քըզի...»: Ահաւասիկ այս գիտակցութեամբ պատրաստուեցաւ այսօրուան հանդիսութիւնը, նոյն գիտակցութեամբ ալ գրեցի թատրոն մը, որպէսզի հայորդիներու հոգիները դորդան այսօր, իրենց համեստ լուման ներդնելով հարիւրամեակի տօնակատարութիւններու հարուստ ցուցակին, որ պիտի իրագործուի ամբողջ տարուան ընթացքին:

Մենք... դուք... անոնք, մեզի ծանօթ քերականութիւնը պէտք է դադրի գործելէ արդ: Մեր միակ ուղին միասնականութիւնն է, որ միակ ելքն է հասնելու համահայկական յաղթանակի: Եւ մեզի... այս հանգրուանին, յաղթանակել է պէտք, այդ ուղիէն միասնաբար, համաչափ քայլերով յառաջանալով որպէս մէկ մարդ.... խօսքս համայն հայութեան մասին է:

Օ՛ն ուրեմն, դէպի Մեծ Եղեռնի հարիւրամեակ, առօրեայ Աւարայրով, դարեր առաջ ստեղծուած հայու ոգիով... Հայկի, Վարդան Մամիկոնեանի, Մոնթե Մելքոնեանի... Հրանդ Տինքի աննկուն ոգիով:

ՄԱԿԻ ԷՍԿԻՃԵԱՆ

Խմբագրական

ԱԲԱՐԱՅՐԻ ՈԳԻՆ՝ ԴԱՐԱԴԱՐՁԻՆ, ԵՒ ԱՆԿԷ ԵՏՔ....

Հայոց Պատմութիւնը կարելի է մեկնաբանել որպէս Հայ Ոգիին յաղթանակը, անոր անկոտրում յարատեւումը դարերու եւ հազարամեակներու ընդմէջէն: Պատմութիւն՝ ուր կ'արտացոլայ, ամենայն հարագատութեամբ, մեր ժողովուրդի ոգին, որ մնացել է մաքառող ու պայքարող, խիզախ եւ լուսաւոր՝ իր արարումներով, մշակութային-հոգեւոր արժէքներու ստեղծագործութեամբ,



հերոսական սխրագործութիւններով, ի հեճուկս ամենէն անբարենպաստ պայմաններուն, ճակատագրի վերիվայրումներուն, նոյնիսկ զայն պատմութեան թատերաբեմէն ընդմիշտ ջնջել սպառնացող Մեծ Եղեռնին, Յեղասպանութեան եւ Հայրենագրկումին...:

Այս Ոգիով է որ իրարու կը շաղկապուին ժողովուրդի մը իրերայաջորդ սերունդները՝ անդրանցելով ժամանակի եւ միջոցի տարանջատումները, եթէ կա՛յ այդ ոգիի գիտակցութիւնը իւրաքանչիւրին մէջ, եթէ չէ խամրած ան, չէ օտարացած ան...:

Այս ոգիի գերագոյն լարման պատմական պահեր կան մասնաւորապէս, որոնք կը դառնան ճշմարիտ ուղեցոյց, լուսատու փարոս բոլոր սերունդներուն համար ալ, այժմ եւ ընդմիշտ:

Նման պահ էր, անկասկած, Աւարայրի ճակատամարտը՝ 451 թուականին, որ տեւեց միայն մէկ օր, պարսկական գերակշիռ զօրքերու դէմ հերոսական առճակատումովը Վարդանանց սերունդին, յանուն խղճի եւ խօսքի ազատութեան, որ ամրագրուեցաւ երեսնամեայ աննկուն պայքարէ ետք՝ Նուարսակի դաշնագրով: Վարդանանք գիտցան գերագոյն զոհաբերութեամբ ոտքի ելլել ի պաշտպանութիւն հաւատքի, խիղճի ազատութեան, այսինքն՝ ազգային ինքնօրէն ազատ կամքի, «Մահ Իմացեալ Անմահութիւն Է» աներեր սկզբունքով ընդդէմ Յազկերտեան բռնատիրական հրահանգին, որ էապէս կը միտէր ստրկացնելու մեր ժողովուրդն ու հայոց աշխարհը՝ մագդէականութեան պարտադրանքով:



«Այս հաւատքէն ո՛չ որ կրնայ խախտել մեզ, ո՛չ հրեշտակք եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուր եւ ո՛չ հուր, ո՛չ ջուր եւ ո՛չ ամենայն զինչ եւ են դառն հարուածք....»։ Սա էր պատասխանը հայ նախարարներուն, Վարդան սպարապետի գլխաւորութեամբ, ուղղուած Յազկերտ Բ. Արքային։ Սա ազգային ինքնուրոյնութիւնը, ազատութիւնն ու արժանապատուութիւնը ամէն գնով պաշտպանելու վճռակամութիւն էր, որ ի՛նչ փոյթ՝ բարոյական յաղթանակով միայն պսակուեցաւ՝ Աւարայրի ռազմադաշտին վրայ, բայց դարձաւ վսեմ պատգամ ու պատուիրան գալիք սերունդներուն, դարձաւ ուրոյն աշխարհագրացողութիւն, կենսափիլիսոփայութիւն, հայեցի լինելութեան կերպ....

Այս ոգիով է որ հայ ժողովուրդը՝ Աւարայրէն 15 դար ետք, ոգիի շաղախած միասնականութեամբ, ոտքի ելաւ 1918-ի օրհասական օրերուն եւ՝ թէեւ եղեռնակոծ ու արիւնաքամ, հերոսական արիւթեամբ մղեց Սարդարապատեան հերոսամարտը եւ հաստատեց իր ապրելու իրաւունքը իր հայրենեաց հողին վրայ՝ իր պետականութեան ալ վերականգնումով։ Որքան նոյնիմաստ կը հնչեն Գեորգ Ե. Ամենայն Հայոց Հայրապետի խօսքերը ի պատասխան Մայր Աթոռը առժամաբար լքելու առաջարկին, երբ թուրքը հասեր էր Երեւանի եւ Էջմիածնի դռները. «Ո՛չ եւ ո՛չ, հազա՛ր անգամ ոչ։ Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից աւանդուած Մայր Աթոռը։ Ես չեմ հեռանայ Հայոց Առաքելական Եկեղեցու օճախից....»։

Նոյն ոգիի հրեղէն ժայթքումն էր 1988-ի Փետրուարը, երբ բռնցքուած հայրենի ժողովուրդը՝ ժայռացած համախմբուածութեամբ, միլիոնով ոտքի ելաւ ի պաշտպանութիւն իր ոտնակոխուած իրաւունքներուն եւ արդարութեան եւ նուաճեց Արցախեան գոյամարտի պատուաբեր յաղթանակը...։ Որքա՛ն դիպուկ կը հնչեն Միլվա Կապուտիկեանի տողերը այս մասին. «Իսկ Փետրուա՛րը, Ութսունութ թուի մեր Փետրուարը, Մի նոր, մի հօգօր Աւարայր էր դա, Եօթ հարիւր հազար իմ արիների զօրք-զօրահաւաք...»։

Ներկայիս եւս, ոգիով է պայմանաւոր հայութեան եւ հայոց երկրի լինելութիւնը։ Արթո՛ւն է ոգին, արթուն է նաեւ ժողովուրդը։ Խամրա՛ծ է ոգին, կը խամրի նաեւ մեր լինելութիւնը։ Իսկ այս քսանմէկերորդ դարը այնքա՛ն սպառնալիքներով է լի՝ թաքուն թէ բացայայտ։ Մարդկային իրաւանց, ազատութեան եւ այլ սկզբունքներու անունով, որքա՛ն խորթ ու կեղծ բարքեր, չարժէքներ, աղանդներ...կը սպառնան մեզ հեռացնել ազգային մեր ինքնութիւնը սահմանող հոգեւոր-բարոյական-մշակութային իրա՛ւ արժէքներէն, հայ ընտանեկան սրբութիւններէն, տոհմիկ աւանդութիւններէն, հայոց լեզուէն, ազգային առաքինութիւններէն, մեզ վարակել դարին յատուկ նիւթապաշտութեան, ընչաքաղցութեան, գործնապաշտութեան, «ո՛ւր հաց, հո՛ն կաց»-ի ախտաւոր հոգեբանութեամբ ու վարքագիծով...։

Այս բոլորին միայն Ոգիով կարելի է դիմադրել, զայն մշտաբարձ պահելով մեր գիտակցութեան մէջ, իւրաքանչիւրս՝ առանձինն եւ հաւաքաբար։ Ցեղասպանութեան եւ Հայրենազրկումի 100-րդ տարելիցին ի մասնաւորի, մեր սեւեռակէտը պիտի ըլլայ, առաջին հերթին, ոգիով ամրանալը, ոգիի շաղախումով եւ շաղկապումով համախմբուիլը, միաւորուիլը, հաւաքական ոյժ դառնալը, առանց որուն ոչ մէկ Պահանջատիրական Դատ կարելի է հետապնդել արդիւնաւորապէս։



Այժմ առաւել քան երբե՛ք, մենք ազգովին պիտի նորոգ կենսաւորուինք Վարդանանց ոգիով, գոհի կերպարէն ազատագրուելով ընդմիշտ....Կրաւորական ողբացողէն բարձրանալով՝ իր իրաւունքներուն համար մարտնչող Պահանջատէրի կերպարին...Ուրիշներէն գութ ու ողորմութիւն, Յեղասպանութեան բարոյական ճանաչումը հայցողէն դէպի սեփական հաւաքական ոյժին միայն ապաւինող եւ իրաւաքաղաքական յանձնառութեամբ գործողի վարքագիծին....Համակերպողական եւ յարմարողական հոգեբանութենէն դէպի նախաձեռնող եւ դէպքերուն վրայ ազդելու աստակ ազգի ու հայոց երկրի կարգավիճակին....Պիտի կարենանք մասնաւորապէս դէմ դնել այն բոլոր թուրք-ազերի եւ թշնամական այլ սաղրանքներուն, որոնք կը հիւսուին մեր երկրին շուրջ՝ ներկայ ճգնաժամային օրերուն, միտելով ջլատել մեր երկրի հոգեբարոյական մթնոլորտը, պառակտել Հայաստան-Արցախ-Սփիւք մեր միասնութեան կամքը:

Նոյն այս ոգիով պիտի կարենանք Ո՛Չ ըսել արտագաղթին, որ Կապուտիկեանի դիպուկ խօսքով՝ «միեւնոյնն է թէ անցեալ դարերում լքել Աւարայրի դաշտը եւ մենակ թողնել Վարդանին....միեւնոյնն է առանց դիմադրելու հակառակորդին յանձնել Անիի բանալիները...»: Ո՛Չ՝ այն բոլոր այլասերման ազդակներուն, որոնք՝ տարբեր դիմակներով, կը վիստան մեր շուրջ, սպառնալով մեզ թակարդել իրենց հայակուլ յորձանքին մէջ:

Դեռ նորոգ ոգիով Աւարայրեան, ոգիի եւ գիտակցութեան յեղափոխութեամբ, պիտի կարենանք վերակերտել, վերակազմակերպել հայրենիքն ու Սփիւքը, նոր վերածնունդ մը պարգեւելով մեր ժողովուրդին եւ հայոց երկրին, ինչ որ լաւագոյն պատասխանը կրնայ ըլլալ թուրքին գործադրած հայասպանութեան եւ հայրենազրկումին, ամէնէն ազդու փոխվրէժը անոր, եւ մեր ապրելու եւ յարատեւելու վճռակամութեան ամէնէն վառ ապացոյցը՝ մեծ Դարադարձին...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Հարցազրոյց

«Կայ Պատմական Սփիւռքը Եւ Նոր Եկած Սփիւռքը, Որոնք Չեն Հաշտուում»

Յունուար 17, 2015

«ՀԵՏՔ»Ի ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԱՐՄԷՆ ԿԼՈԳ ՄՈՒԹԱՖԵԱՆԸ

Վարեց՝ ՄԵՐԻ ՄԱՄԵԱՆ

Արմեն Կլոգ Մուրաֆեանը ֆրանսահայ պատմաբան, հայագետ է, Մորբոնի համալսարանի պրոֆեսոր։ Նարեկացի արուեստի միությունում տեղի ունեցած իր դասախոսության ժամանակ նա տարանջատեց Սփիւռքի հայ գաղթօջախների երեք տեսակ։ Առաջինը՝ քաղաքական, երբ մասնաւորապէս Ցեղասպանութիւնից յետոյ հայերը այլ երկրներ են արտագաղթել, երկրորդը՝



մշակութային, որտեղ պետականութեան բացակայութեան ընթացքում հայ մշակոյթը զարգացել է, եւ տնտեսական, եւ սոցիալ-տնտեսական դրութեան պատճառով մարդիկ արտագաղթում են Հայաստանից։ «Հետք»ի հարցերին պատասխանում է Արմեն Կլոգ Մուրաֆեանը։

ՄԵՐԻ ՄԱՄԵԱՆ.- Որպէս պատմաբան եւ հայագետ, ձեր գնահատմամբ՝ այժմ պատմական ի՞նչ ժամանակաշրջանում ենք ապրում

Հայաստանում։

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Շատ դժուար հարցով սկսեցիք։ Դժուար ժամանակներ են, որովհետեւ Հայաստանը պէ՛տք է գոյատեւի, թէ չպէտք է գոյատեւի։ Բոլորը խօսում են, բայց որեւէ մէկը լուծում չի գտել։ Ես էլ լուծում չունեմ. ո՛չ քաղաքագետ եմ, ո՛չ տնտեսագետ։ Դժբախտաբար, հիմակուայ արտագաղթը երկիրը լքել է, որ չեմ մեղադրում, որովհետեւ տնտեսական վիճակը շատ ծանր է։ Երկու օր գնացինք մինչեւ Արցախ, ճանապարհի վրայի գիւղերում կիսալքուած վիճակ էր։ Այս մասին շատ չխօսեմ, որովհետեւ դա բոլորը գիտեն, բոլորը գիտակից են, սակայն՝ անզօր։

ՄԵՐԻ ՄԱՄԵԱՆ.- Դուք նշում էք, որ արտագաղթի պատճառով այժմ այսպէս կոչուած տնտեսական գաղթօջախներ են ստեղծուում, երբ սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով մարդիկ լքում են երկիրը։ Ի՞նչը յանգեցրեց այս վիճակին։



Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Իմ կարծիքով՝ երկիրը զարգացնելու պակասությունն է: Հարուստ երկիր չենք, բայց վերջապես երկիր է. հզոր Սփիւռք ունի, որոշ ազատություն, որոշ բերրի հողեր ունի, ինչո՞ւ չպիտի կարողանայ կանոնաւոր ապրել: Հարստությունների բաշխումը բոլորովին սխալ է, անընդունելի: Մի կողմում կը տեսնենք մեծահարուստներ, միւս կողմում՝ լքում են գիւղերը: Չեմ ասում, որ միայն Հայաստանն է այս պատկերը ներկայացնում, բայց, դժբախտաբար, այստեղ այդպէս է: Ինչո՞ւ՝ դժուար է ասել: Ճիշդ է՝ նախ չկայ, մեծ հարստություն չկայ, բայց ես վստահ եմ, եթէ Հայաստանը լաւ ղեկավարուի, կը կարողանայ ապրել:

Մի բան ունի Հայաստանը, որը դժբախտաբար, ժողովուրդը չի կարողանում օգտագործել, դա մշակոյթն է: Հազարմեայ՝ մշակոյթ է: Մի քանի ամիս առաջ, երբ հայ-ռումինական նկարների վերաբերեալ ցուցահանդէսն էի պատրաստում, այստեղ էի Ռումինիայի պատմութեան պետական թանգարանի տնօրէնի հետ: Տեսնելով պատմութեան թանգարանը, նա ապշած էր, թէ ինչպէ՞ս կարող են այդ բոլոր հարստությունները լինել այստեղ, այդ բոլոր ողբերգություններից յետոյ: Նա ասում էր, որ իրենք Ռումինիայում այսքան բան չունեն, չունենալով հանդերձ պատմութեան այդքան ողբալի էջեր: Մշակոյթը Հայաստանի հարստությունն է:

Զարգացնելու հողը կայ: Չեմ ասում, թէ մշակոյթը մարդկանց ուտելիք կը տայ, բայց վերջապէս ապացոյց է, որ կարելի է զարգացնել երկիրը: Ես համոզուած եմ:

ՄԵՐԻ ՄԱՄԵԱՆ.- Երբ հայ ժողովուրդը պետականություն չի ունեցել, մշակոյթը եւ եկեղեցին եղել են ժողովրդին միաւորող գործոններ: Արդեօք այսօ՞ր էլ դրանք միաւորում են մեզ:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Միշտ այդ երկու հանգամանքները կան: Ես անկեղծ ասեմ՝ աւելի շատ մշակոյթի մարդ եմ, քան՝ եկեղեցու: Իմ կարծիքով՝ պէտք է աւելի մշակոյթին մօտենալ եւ մշակոյթին մաս կազմել: Հիմա մի քիչ բաժանուած են եկեղեցին ու մշակոյթը: Օրինակ բերեմ. Աբովեան փողոցի վրայ փոքր եկեղեցի կար՝ կաթողիկէ, հիմա արդէն ընկղմուած է այդ մեծ շէնքի մէջ: Եկեղեցին՝ չասեմ մշակոյթի հանդէպ յանցագործություն է արել, բայց արել է սխալ քայլ: Ես շատ էի սիրում այդ եկեղեցին, այդ հին ակադեմիական շէնքը: Ես կարծում եմ՝ քանդեցին այդ շէնքը, որպէսզի եկեղեցին աւելի երեւայ, որը գուցէ իմաստ ունի, բայց բոլորովին ընկղմուեց դրա մէջ: Այսինքն, որոշ թիրիմացություն կայ մշակոյթի եւ եկեղեցու միջեւ:

ՄԵՐԻ ՄԱՄԵԱՆ.- Հնարաւո՞ր է ինչ որ ձեւով ուղղել այդ թիրիմացությունը:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Մարդկանց կամքից է կախուած:

ՄԵՐԻ ՄԱՄԵԱՆ.- Ինչպէ՞ս էք գնահատում Սփիւռքի եւ Հայաստանի կապերի զարգացումը:



Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Սփիւռքի հարցը բարդացաւ: Այժմ ամէն երկրում երկու Սփիւռք կայ՝ տեղական պատմական Սփիւռքը եւ նոր եկած Սփիւռքը, որոնք չեն հաշտուում: Մա խնդիր է: Օրինակ, վերջերս Ֆրանսիայի Նիս քաղաքում ընդհարումներ եղան տեղական հին գաղութի եւ նոր հայաստանցի գաղութի միջեւ: Մա շատ խորհրդանշական պահ էր: Խնդիրը բարդացաւ, որովհետեւ երկխօսութիւն չկայ: Բայց ես յոյսս դեռ կապում եմ Սփիւռքի մեծ գաղութների հետ, ինչպէս՝ Ֆրանսիա, Հարաւային Ամերիկա, Հիւսիսային Ամերիկա: Ի հարկէ, ողբերգութիւնը Միջին Արեւելքում է: Որոշ ձեռով Լիբանանն է դիմանում, հրաշքով: Ըստ ինձ՝ Հալէպն արդէն անյոյս է: Սրանք շատ մեծ մշակութային գաղութներ էին: Ես միշտ հիանում եմ Լիբանանով: Իմ կարծիքով՝ այս գաղութը լաւ օրինակ է:

ՄԵՐԻ ՄԱՄԵԱՆ.- Արդեօք հնարաւո՞ր է կամուրջ ստեղծել հին եւ նոր Սփիւռքի միջեւ:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Դժուար է, կամաց-կամաց է ստեղծուում: Մեծ ողբերգութիւնը նոր Սփիւռքի գոյութիւնն է, իսկ Հայաստանում գոյապահպանման կոչիւ է: Բայց նորից եմ ասում՝ չեմ մեղադրում:

ՄԵՐԻ ՄԱՄԵԱՆ.- Պատմական Սփիւռքը մեզ հարուստ ժառանգութիւն է թողել: Ի՞նչ է ստեղծում նոր Սփիւռքը:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Չէ, նոր Սփիւռքը առայժմ դեռ իսկական արդիւնք չի տալիս, գոնէ իմ իմացած Եւրոպայի մէջ: Ամերիկայում, Ռուսաստանում՝ չգիտեմ: Բայց հակասութիւնը կա՛յ հին եւ նոր Սփիւռքի միջեւ:

ՄԵՐԻ ՄԱՄԵԱՆ.- Պատմական Սփիւռքի ձեւաւորումը մեծապէս կապուում է Հայոց Ցեղասպանութեան հետ, որը մինչ այժմ պայքարում է դրա միջազգային ճանաչման համար: Ի՞նչ է սպասուում 2015 թ.ից՝ 100ամեայ տարելիցից յետոյ:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Պէտք է հասնենք այն բանին, որ Թուրքիան ճանաչի Ցեղասպանութիւնը: Յետոյ գալիս է հատուցման խնդիրը: Ցեղասպանութիւնը տեղի ունեցաւ, ճանաչեն կամ ոչ, բոլոր փաստաթղթերն ունենք, ամէն ինչ պարզ է: Հիմա Թուրքիան կը ճանաչի՞ թէ չի ճանաչի, չգիտեմ:

Բայց ես միշտ պնդում եմ, որ միայն 1915 թ.ի Ցեղասպանութեան մասին չխօսենք: Խօսենք նաեւ ապագայի մասին, խօսենք հայ մշակոյթի զարգացման մասին: Սրա վրայ պէտք է շեշտը դնել:

2005 թ.ին ինձ խնդրեցին ֆրանսերէն մի փոքրիկ գրքոյկ պատրաստել նրանց համար, ովքեր չգիտեն հայերի եւ Ցեղասպանութեան մասին: Ես գրեցի, բայց խնդիր եղաւ շապիկի հետ: Նորից ուզեցին ողբերգութեան պատկեր դնել: Հիմա մարդիկ այդ նկարները տեսնում են աշխարհի տարբեր կողմերում, մէկ աւել, մէկ պակաս: Եւ բարեբախտաբար, համոզեցի, որ ուրիշ շապիկ դնենք՝ Երեւանի Ապրիլի 24ի երթը: Դա ապագան է: Ինձ ասում են՝ ինչո՞ւ ես

ուզում մոռանալ: Չեմ ուզում մոռանալ, ինչպէ՞ս կարող եմ մոռանալ: Բայց չեմ ուզում միայն անցեալի մասին խօսել: Անցեալը չմոռանալով՝ պէտք է ապագան պատրաստել:

ՄԵՐԻ ՄԱՄԵԱՆ.- Ի՞նչ ենք հիմա ստեղծում ապագայի համար:

Ա. Կ. ՄՈՒԹԱՖԵԱՆ.- Մշակոյթն է: Հիմա էլ հայ մշակոյթը զարգանում է, գրողներ, արուեստագետներ կան: Դժբախտաբար, Սփիւռքում հայերէն գրողները ասելի քիչ են: Հոգ չէ: Հայ մշակոյթը պարտադիր չէ, որ հայերէն գրուի: Վերջերս գրեցի 11-14րդ դարերի հայ մշակոյթի մասին, եւ սա ֆրանսերէն է: Պէտք է այդ ձեւով էլ շարունակել: Գուցէ ինձ ասեն՝ ինչո՞ւ ես ֆրանսերէն գրել եւ ոչ հայերէն: Չնայած ես հայերէն որոշ առումով գիտեմ, բայց ուզեմ-չուզեմ մայրենի լեզուս ֆրանսերէնն է, ֆրանսերէն եմ մտածում: Ֆրանսերէն գրելով կարող ենք ասելի շատ տարածել: Եթէ հայերէն թարգմանուի, խնդրեմ:


«ՀԵՏՔ»

Յօդուածներ

ՅՈՒՇԵՐՈՒ ՇԱՐՔԷՆ

ԽՐԱՏՐ ԳԻՆ ՉՈՒՆԻ, ԲԱՅՑ ԱՆԳԻՆ Է...

Վարդան Թաշճեան



Մելգոնեանի մեր ուսանողական տարիներուն, ընդհանրացած սովորութիւն էր ամէն տարեվերջին, իրարու փոխանցելու մեր անձնական յուշատետրերը, գրութի՛ւն մը, յո՛ւշ մը, պատգա՛մ մը, խրա՛տ մը եւ կամ ստորագրութի՛ւն մը կորզելու մեր ուսուցիչներէն, մեկնող կամ մնացող ընկերներէն, բաժանումի այդ անխուսափելի եւ յուզիչ օրերուն: Երբեմն կը պատահէր, որ ուսուցիչ մը 10-15 յուշատետր թելին տակ սրբագրելի տետրակներու պէս տուն կը տանէր, իր կարգին շարադրելու ինչ որ կրնար ամէն մէկ աշակերտէն կրած իր փորձառութեան հիման վրայ: Այս բոլորը կը կատարուէին բարի եւ սիրայօժար տրամադրութեամբ, հաճոյքով, բնական, որպէսզի գոհար

խրատականներու հոսկ այդ շարանը «ականջի օդ» դառնար իւրաքանչիւրին, կեանքի նորաբաց այդ պայքարին ճամբուն վրայ, Մելգոնեանի կղզիացած, բայց ընտանեոյր, անմեղունակ, անգիտակից եւ բնագդական ապրելակերպէն ետք:



Իմ տետրակս ալ, այլոց կարգին, բախտը ունեցաւ գրչի հետքերը հաւաքելու ոչ միայն ընկերներու, այլեւ՝ մեր թանկագին ուսուցիչներուն՝ «մեծ»երուն, որոնց շունչն ու քրտինքը իրենց կնիքը ունեցան՝ ոլորուած եւ կապոյտ կամ վարդագոյն ժապաւէնով հանգուցուած մեր վկայականներուն մէջ:

Տարիներ կը բաժնեն զիս այդ օրերէն, երբ այլեւս անոնցմէ շատեր, ափսո՛ս, անդարձ մեկնած են այս աշխարհէն, բայց իրենց ձեռագիրը, դէմքը, ժպիտը, ոգին, մէկ խօսքով՝ ներկայութիւնը կը վերապրիմ ամէն անգամ, որ կը թերթատեմ այդ յուշատետրին էջերը, եւ փշաքաղումով կը վերադառնամ 50-ական թուականներու Մելգոնեանին, ուր մեր պատանութեան տարիները թրծուեցան հայութեամբ, անմահ Բարեբարներու «մեծ երազի ճամբուն վրայ»: Այդ պատգամները զին չունին, բայց շատ անգի՛ն են, եղա՛ծ են, ոչ միայն ինծի, այլեւ՝ յաջորդող սերունդներուն, մաղթանքնե՛ր՝ որոնք ժամանակավրէպ չեն նկատուիր երբեք, որքան ատեն որ աշխարհը կը շարունակէ արձանագրել բարոյական եւ ընկերային արտառոց իր նահանջը:

Ահա այդ էջերէն փրցուած քանի մը պատառիկներ:

ա. Պրն. Պերճ Սանտրունի

Ինձմէ դասարան մը բարձր ընկերներէս՝ Յովսէփ Նաճարեանը, տետրակիս էջերէն մեկուն վրայ, չինական մելանով նաւակի պղտիկ գծագրութեամբ մը, սա տողերը մէջբերած էր բանաստեղծ Ռուբէն Որբերեանի «Գիտլիս ճամբան» քերթուածէն:

«Կեանքի նաւակը հետք չթողուց իր ետին,

Մոռացումը առաւ ինձմէ ամէն բան,

Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,

Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման...»

Այս էջին դիմացը, անգլերէն լեզուի մեր ուսուցիչը, Շէյքսպիրի սիրահար Պրն. Պերճ Սանտրունին, իսկական gentleman մը, բնաւորութեամբ ու հասակով պատկառելի կերպար մը, որ քաղաքէն կուգար դպրոց, իր գրութեան ներշնչումն ու միտք բանին հիմնած էր վերի տողերուն վրայ, սա ակնարկումով:

«Միրելի Վարդան, կեանքի նաւակը հետք կը թողո՛ւ իր ետին (ընդգծումը իրմէ): Ատոր համար է որ Պատմութիւն կը սորվին: Ատոր համար է մեր ծնողներն ու դաստիարակները, մեզ անշահախնդրօրէն սիրողներն ալ ունին իրենց առաջին եւ վերջին խօսքը.- «Հետեւեցէ՛ք մեր ազնիւ, քաջարի եւ բարի ալ նախահայրերուն ոտնահետքերուն»: Անոնք մէն մի իրաւ հայու ցոյց կուտան թէ ո՞ր պէտք է տանին մեր քայլերը զմեզ: Կը մաղթեմ որ մեր թանկագին նախահայրերու ջահը ձեռքէդ վար չղնես բնաւ եւ այն ժամանակ ապահով կրնաս ըլլալ, որ քալած ճանապարհդ միշտ լուսաւոր եւ միշտ նպատակին պիտի տանի քեզի: Վարդանի թոռնիկ, անունովդ ապրիս, կը մաղթեմ որ քու նաւակդ ալ առաջին Վարդանին նման ձգէ իր արժանի հետքը, որուն յաջորդ սերունդներ հպարտութեամբ ու սիրով կը հետեւին:



բ. Պրն. Ն. Թամամեան

Գրականութեան մեր ուսուցիչը, Պրն. Ներսէս Թամամեանը, գրական ծածկանունով Ն. Կատար, որուն «Տաճարն Հայկական» քերթուածը բաղդատութեան կը դնէին Վ. Թէքէեանի «Եկեղեցին Հայկական»ին հետ, իսկական «գլո՛ւխ» էր, Մելգոնեանական բացատրութեամբ: Կրնար դասապահ մը ամբողջ մէ՛կ շունչով վերլուծել բանաստեղծութեան մը տակաւին մէկ տողը միայն, գրականատենչ սաներս «բերնէն կախելու» աստիճան: Իցիւ թէ ձայնագրութեան մեքենայ մը ըլլար սեղանին վրայ այդ օրերուն, կրնային գրախօսական հատորներ մէջտեղ գալ: Թէեւ եղան դասընկերուհիներ, որոնք շնչասպառ կը փորձէին նօթագրել իրենց լսածը մինչեւ վերջին ստորակէտ, առ ի պատրաստութիւն... հայերէնի յաջորդ գրաւորին...

«Սիրելի Վարդան, շրջանաւարտութեանդ այս ուրախ առիթով սրտագին կը շնորհաւորեմ քեզ եւ յաջողութիւն կը մաղթեմ յառաջիկային ալ համար:

Բայց ամէն արժանաւոր յաջողութիւն կախում ունի ծրագրուած՝ համբերատար ու յարատեւ աշխատանքէ, իրական կարողութեանդ վրայ հիմնուած՝ ազնիւ եւ արդար փառասիրութիւններ իրագործելու համար»:

գ. Դոկտ. Ագապի Նասիպեան-Էքմէքճեան

Պատմութեան մեր ուսուցիչը զգայուն, հեզահամբոյր, արդարամիտ Տիկ. Ագապին, որ յետագային Մելգոնեանի տնօրէնութեան պաշտօնն ալ վարեց, չափազանց շեշտակի, զուսպ եւ տեղին՝ չէր վարաներ բաշխելու իր խորհուրդները առատօրէն, մեր մէջ խոստմնալից ապագայով օժտուած սերունդ մը տեսնելու սրտի ջերմ ցանկութեամբ: Կը պաշտէր Մելգոնեանը, կուտ երկրպագուի մը նման, ինչ որ հասկնալի կը դարձնէ իր ցնցումն ու յուսախաբութիւնը ի տես անոր փակումին:

«Մարդոցմէ սիրուելու համար՝ զանոնք սիրելու է անխտիր, իսկ բարեկամներ ունենալու համար՝ անկեղծ ու լաւ բարեկամ ըլլալու է»:

դ. Տիկ. Զելա Դաւիթեան

Բարձրագոյն դասարաններու ուսողութեան մեր ուսուցիչն էր Տիկ. Զելան: Զարմանալի զուգադիպութեամբ իր քոյրը՝ Մարի Լուն ալ նոյնը եղաւ ինծի Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ: Երիտասարդ, կայտառ, աշխոյժ եւ յարմար անձը՝ առհասարակ տհաճ եւ անմարսելի այս նիւթը հետաքրքրական, հասկնալի եւ սիրելի դարձնելու համար...

«Սիրելի Վարդան, կը յիշե՞ս դասարանին մէջ որքան կը հիանայի գիրիդ եւ գծագրութեանդ վրայ: Նոյնպէս ալ կը հիանամ ազնիւ բնաւորութեանդ եւ համագործակցութեան ոգիիդ վրայ:

Գիտե՞ս Վարդան, մարդ որքան ալ խելացի ըլլայ, որքան ալ ներկայանալի ըլլայ արտաքինով, երբ անոր քով կը պակսի ազնիւ ոգին եւ ուրիշներու հետ աշխատելու սէրը կեանքի մէջ, ան կ'ըլլայ ձախող եւ ընկերութեան մօտ՝ անհանդուրժելի: Այդ տեսակէտով դուն ապահով գետնի վրայ կը գտնուիս»:



ե. Պրն. Վահան Պետելեան

Վաստակաւոր խմբավար, երգահան, «Տաղ Սուրբ Մեսրոպայ»-ն կամ՝ «Որքան Դիցակերտ»-ը անմահացնող՝ Կիպրոսի երաժշտութեան հայր եւ մինչեւ 90 անց տարիքին՝ տակաւին ջութակի դասեր տուող այս անխոնջ մշակը իր էջը սկսած էր նօթայի գիծերու մէջ իր հեղինակած «Գարուն» երգին «Ես Իմ Աշխարհի Գարունը Կ'ուզեմ» առաջին տողով եւ տակն ալ աւելցուցած էր հետեւեալը.

«Երաժշտութիւնը կը սիրես, սերտե՛ր՝ զայն: Որչափ խորանաս անոր մէջ, այնչափ եւս պիտի սիրես:

Հիները կ'ըսէին թէ երաժշտութիւնը հոգին կ'ազնուացնէ, հիմա կ'ըսեն թէ ան թէ՛ հոգին կ'ազնուացնէ եւ թէ ալ միտքը կը մշակէ»:

զ. Պրն. Պօղոս Գեորգեան

Զօրաւոր անհատականութեամբ օժտուած եւ մեծապէս յարգելի անձնաւորութիւն մըն էր Պրն. Գեորգեանը: Համբաւաւոր մանկավարժ, դաստիարակ եւ գիրքերու հեղինակ: Ֆրանսացի յայտնի դերասան Շարլ Պուայէն յիշեցնող իր արտաքինով, առինքնող պէխով եւ գլխարկին ու բաբիձին մշտական ներկայութեամբ:

Տետրակս երբ իրեն կուտայի, չափազանց կ'աճապարէր, օղակայան մեկնելու վրայ, բայց չուզէր խնդրանքս մերժել եւ ոտքի վրայ, դիւանին մէջ, ստիպողական իր մէկ գործը վերջացնելուն պէս՝ կէս վայրկեանի մէջ սա բառերը արձանագրեց իբրեւ մէջբերում.

««Օրուան մարդ մը յաճախ մէ՛կ օրուան մարդ կ'ըլլայ», - ըսած են» եւ ստորագրեց:

Բազմաթիւ անգամներ նոյն այս տողը իմ կարգիս փոխանցած եմ թէ՛ աշակերտներու, թէ՛ բարեկամներու եւ տարիներու սահանքին հետ աւելիով կրցած եմ թափանցել անոր բացարձակ ճշմարտութեան:

Ասոնք փունջ մըն են միայն ուսուցչական մաղթանքներէն, որոնք անտարակոյս կողմնացոյց ծառայեցին ինծի անսայթաք եւ գիտակից ոգիով ապրելու եւ վայելելու կեանքս:

Միւս կողմէն սակայն, երբեք պիտի չուզէի ստորագնահատած ըլլալ այն ինչ որ գրած էին ընկերներս: Կը տարուիս մտածելու թէ ինչպէս կրնային շօշափել այդպիսի հասուն միտք եւ խոր մտածում, գեղեցիկ եւ անթերի հայերէնով: Որքան զգալի է ազդեցութիւնը Մելգոնեանէն ժառանգուած առողջ եւ հիմնաւոր հայագիտութեան:

ա. Աստղիկ Նասիպեան

«Ինչ ալ ըլլայ քու ընտրած ճիւղդ կեանքի մէջ, աշխատե՛ր որ անոր զուգընթացօրէն յառաջացնես միւս կարողութիւններդ որ ունիս, թէ արուեստի թէ գրականութեան ճիւղերուն մէջ, եւ ըլլաս բազմակողմանի հայ երիտասարդ մը, որուն շատ պէտք ունի մեր ազգը: Կը մաղթեմ նաեւ, որ շարունակես միշտ զուարթամիտ եւ ժպտուն մնալ, որպէսզի աւելի եւս փնտռուիս ընկերային շրջանակներէ ներս»:



Կարելի՞ է աչք չթրջել, երբ շուրջ 25 տարուան անջրպետային ժամանակամիջոց մը կը բաժնէ մեզ այն օրէն երբ տարաբախտ Աստղիկը վաղահասօրէն հրաժեշտ տուաւ այս աշխարհին, եւ եղբայրական պարտք մը մղեց զիս սրտի խօսքս յղելու իբրեւ դամբանական Կիպրոսէն Լոս Անճելըս, իր յուղարկաւորութեան տխուր օրը:

բ. Ժանէթ Սուլթանեան

«Վարդան, կեանքի մէջ ջանա՛ կարելորը անկարելորէն զանազանել, տգեղը գեղեցիկէն ու բարձրը՝ ցածէն: Եթէ ասոնց տարբերութիւնը տեսնես, քու ամէն մէկ քայլիդ մէջ, այն ատեն միայն կրնաս վստահ ըլլալ որ յաջողած ես»:

գ. Շնորհիկ Որբերեան

«Եթէ կ'ուզես կեանքի մէջ յաջողիլ, փորձէ միշտ ժպտիլ:

Արուեստը կը սիրես, կը մաղթեմ որ մնաս միշտ նոյնը, փնտռելով հաճոյքը արուեստին մէջ ու պիտի չզղջաս»:

Ժանէթն ալ, Շնորհիկն ալ իրենց շնորհալի ձայնով, գեղարուեստական մեր երեկոներուն բեմի զարդ եղան շարունակ, Կոմիտասի, Կանաչեանի, Պետէլեանի եւ այլ երգահաններու մեներգներուն սքանչելի մենակատարումներով:

դ. Արաքսի Այնթապլեան

«Դաշտի ծաղիկներն անգամ տոկունութիւնն ունին դիմանալու հովին ու անձրեւին:

Մարդիկ չունենա՞ն անոնց չափ կամք, դիմադրելու կեանքի դժուարութեանց»:

ե. Մանուկ Գույումճեան

«Ունինք երազ մը իւրաքանչիւրս ու առողջ այս վայրին մէջ այդ երազը իրականութեան վերածելու նախաքայլերուն մէջ ենք արդէն: Աշխարհը այս է, ու քանի բարձրանաս ընտրած ճամբայէդ, աւելի ու աւելի պիտի ցրտէ: Բայց մի՛ վիատիր դուն բնաւ, պիտի կարենաս կամքի ուժովդ դիմադրել այդ ցուրտին ու քայլերդ շարունակել մինչեւ «Գագաթն Արփաւէտ»:

Անունովդ շեշտուող պարտականութիւնը հայ մեծ ազգին հանդէպ կը յուսամ պիտի կարենաս լիովին կատարել»:

Արաքսին ալ, Մանուկն ալ իրենց տարիքի գիտակցութիւնը աւելիով որդեգրած ընկերներ էին, Արաքսին՝ Նիկոսիայէն, ցերեկօթիկ, իսկ Մանուկը՝ Ատիս-Ապեպայէն: Ազնիւ, բարի, հաղորդական:

Ահա այսպէս: Որքա՛ն օգտակար, անկեղծ, բարեկամական եւ վստահելի բարեմաղթանքներ, որպէսզի խոստումներով սկսուած կեանք մը զոյումներով վերջ չգտնէ: Խիղճս հանգիստ է, որ կրցայ առաւելագոյն չափով հետեւիլ եւ գործադրել կեանքի եւ իրա՛ւ հայու այդ սկզբունքները, ու այս պահուս պարտք կը զգամ երախտագէտ ոգիով խոնարհելու անդարձներու անթառամ յիշատակին: Իսկ միւսները, որոնք երեկուան սեւամազ

երիտասարդները չեն այլևս, սակայն արեւն ու բնութիւնը կ'ըմպեն դեռ իրենց բովանդակ բարիքներով, կարօտախառն սիրտով կը համբուրեմ այդ տողերը գրող ձեռքերը եւ ալ գուցէ կնճիռ կապած ճակատները, ուր ալ գտնուին անոնք, իրենց պաշտելի Մելգոնեանէն հեռու՝ ծանօթ-անծանօթ երկնականամարներու տակ:

14 Օգոստոս, 2014

Նիկոսիա

Տեսակէտ

ԽՈՍՏՈՒՄԴ ... ԽՈՍՏՈՒՄՍ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵՄ , ՀՐԱՆԴ

« Իրականութիւնն ու արդարութիւնը՝ չարագործները սարսափի մատնող ամենէն սոսկալի ազդակներն են , այս պատճառով անոնք շրջանառութեան մէջ դրած իրենց գործօններու բովանդակ ներուժով եւ տարողութեամբ , իրենց կառոյցները կը հիմնեն իրականութիւնը ծածկող գործելաձեւի մը վրայ ... »

Ֆեթիյէ Չէթին

Այս գիրքը վերջաբան մը չունի ... այս գիրքը վերջ չունի ... այս գիրքը չի կրնար վերջ ունենալ ... դեռ նորերը կը գրուին , այնքան ատեն , որ Հրանդը զգետնած ոճրագործները , այդ ոճրագործները փառաբանողները եւ ոճիրը ծրագրողները , հակառակ յայտնաբերուած տուեալներուն եւ հետապնդումներու փուլին հասած զարգացումներուն , դեռ դատական ատեն չեն ներկայացուիր ... այս գիրքը չի կրնար վերջ ունենալ այնքան ատեն , որ « երեխայէն ոճրագործ սարքած » մութ ուժերը չեն հարցաքննուիր ... այս գիրքը վերջ չի կրնար ունենալ , եթէ պետութեան խորքերուն մէջ թաքնուած « այդ կառոյցը » իր ամբողջութեամբ



հաշուեյարդարի չենթարկուի ... :

Այս գիրքին մէջ գրածներս , միայն մէկ մասն են ուշադրութիւնս գրաւած եւ գլուխս խառնշտկած կարգ մը հարցադրումներու , որոնց հետքերով ջանացի կարելիս ընել այս հանգրուանին , մատնանշելով գիտցածներուս եւ նշմարածներուս առանցքին մէջ երեւան եկած դէպքերը , խնդրոյ առար- կայ հաստատութիւնները , կառոյցները եւ առնչակից անձերը : Այս բոլորէն մեկնած , հաւաքագրեցի հարցադրումներուս հետքերով ձեռք բերած կարգ մը հաստատումներ եւ փաստարկներ , որոնք իբրեւ դատական հայց ներկայացուցած էի : Այս գործընթացը կը շարունակուի , գրելիք դեռ շատ բան կայ ... :



Այս գործընթացը շարունակուելու պարագային , նոյնիսկ եթէ մեղաւորները լոկ մատնանիշ ընելով բաւականանամ , « ինչու՞ Հրանդ Տինքը սպաննեցին » հարցումին տալիք , յստակ պատասխան մը ունիմ ...

Հրանդ Տինքը սպաննեցին , Որովհետեւ ան կանգնած էր այն խաչմերուկին վրայ , ուր պետութեան գերիշխանութեան սպառնացող սարսափը ապրողներուն , կարմիր գիծերուն եւ թապունրուն պաշտպան ու կողմնակից եղողներուն եւ անոնց դէմ կանգնողներուն պայքարի գիծերը կը հատուէին ...

Որովհետեւ Հրանդ Տինք իր դիրքով , իր հեղինակութեամբ եւ իր կեցուածքով շարունակ անոնց կը յիշեցնէր այն բաները , որոնք երբէք յիշել չէին ուզեր ... կը մտրակէր անոնց առերեսուելու անվերջ վախերը , եւ կը յայտնուէր հոն՝ ուր իրենց յանցանքներով եւ մեղքերով լի անցեալը մոռա ցութեան տալու համար անդու ջանք կը թափուէր ...

Որովհետեւ Հրանդ Տինք չէր բաւարարուէր , լոկ այդ այդ անցեալին պատմութիւնը անոնց յիշեցնելէ , այլ այդ բոլորը կը պատմէր այս երկրի մարդոց , կը պատմէր իր ընկերներուն , բարեկամներուն , իր հետ կապ ունեցող ամէն մէկուն , կը պատմէր իր ընթերցողներուն , իր ելոյթներուն հետեւողներուն եւ զինք մտիկ ընողները բոլորն ալ անոր ըսածներուն կը հաւատային ...

Որովհետեւ Հրանդ Տինք կ'ելլէր բոլոր տեսակի ճնշամիջոցներուն , կ'ընդդիմանար զինուորական վերահսկիչ վարչաձեւերուն , եւ երկրին բոլոր օրէնքներուն ու բոլոր հաստատութիւններուն մէջ , լիարժէք ժողովրդավարութեան հաստատման համար կը պայքարէր ... սակայն անոնց տեսանկիւնէն , մանաւանդ հայու մը բարձրաձայնած « Ժողովրդավարութիւն » եւ « Բազմակարծութիւն » կոչերը , երբէք ընդունելի չէին կրնար ըլլալ ...

Զախողելով այդ պայքարին մէջ , իրենց ոխը՝ Հրանդին ուղղուած առանցքային գործելաձեւի վերածեցին , եւ երբ անդրադարձան , որ աշխարհը համոզելու իրենց բոլոր ճիգերն ու փորձերը ի դերեւ ելած էին , իրենց 1915ի ցեղասպանութեան ուրացումի քաղաքականութիւնը , « ցեղասպանութեան անհիմն պնդումներուն դէմ պայքար » անուան տակ , ներքին ոթորտներու մէջ , Հրանդ Տինքի դէմ թշնամանքով դրսեւորեցին , իրենց ամբողջ բարկութիւնը Հրանդ Տինքի վրայ թափեցին , զայն իրենց ոխերուն նշաւակ դարձուցին , Հրանդը « թշնամի » ին դէմ շղթայազերծուած հոգեբանական պատերազմին պատճառը եւ թիրախը դարձուցին ...

Այդ օրերուն , միաժամանակ Եւրոպայի միութեան հովերը կը փչէին ... Եւրոպայի Միութեան , այսինքն արեւմուտքի դէմ պայքարելու համար , գոյութիւն չունեցող սպառնալիք մը ստեղծելով , այդ առաքելութիւնը իրականացնելու կոչուածներուն դէմ , տարողունակ պայքարի մը մէջ մխրճուեցան ... ոչինչէն ստեղծած իրենց այս նոր թշնամիին դէմ յայտարարած պայքարն ալ , սկսան Հրանդ Տինքին դէմ սնուցած իրենց անհիմն թշնամանքին ընդմէջէն տանիլ ...



Երկրին իշխանութեան տիրանալու համար տեղի ունեցող հակամարտութեան մէջ ե՛ւս Հրանդը խնդրոյ առարկայ էր , իշխանութիւնը ձեռքէ չհանելու եւ իրենց քաղաքական հակառակորդները դժուար կացութեան մատնելու նպատակով նշանակուած թիրախներու զլխաւորը՝ դարձեալ Հրանդն էր ... հակառակ անոնց յարուցած բոլոր դժուարութիւններուն , հակառակ անոնց ի գործ դրած բոլոր ճիգերուն , « Արդարութիւն եւ Բարգաւաճում » կուսակցութիւնը խորհրդարանին մէջ դարձեալ մեծամասնութիւն կը դառնար , դարձեալ կառավարութիւնը կը կազմէր ... վարչակարգը պաշտպանելու կոչուած իրենց ստեղծած մեքանիզմին բոլոր լծակները , մէկիկ մէկիկ ձեռքէ կ'ելլէին եւ « յետադիմական » կոչուող ներքին թշնամիին ձեռքը կ'անցնէին ... այս ոլորտներուն մէջ մղուող պայքարը , իր ամենաթեժ եւ ամենադժուարին փուլերը կ'ապրէր , այս բոլորին մէջ ամենէն կարեւոր խնդիրը՝ նախագահական աթոռը կորսնցնելն էր , որուն համար ծայր տուած հակամարտութիւնը , զիրար կոտորելու աստիճանին հասած էր , եւ ահա այս հակամարտութիւնն ալ , Հրանդին կեանքին գնով տեղի կ'ունենար ...

Դաժանօրէն տեղի ունեցող այս հակամարտութիւններու եւ առնչակից հարցերու խաչմերուկին վրայ կանգնած Հրանդ Տինք , դարձեալ թիրախ դարձած էր , մշտապէս սնուցուելով մեծցած այն պատմական աւանդոյթին , որ « հայերու հանդէպ թշնամանք » ն էր ... արդարեւ , եթէ խնդրոյ առարկան որեւէ հայ անհատի կեանքն էր , ապա հակամարտող բոլոր կողմերուն համար ալ , այս թշնամանքն ու հայերու հանդէպ կանխակալ կարծիքը նոյնն էր , ոչ մէկ տարբերութիւն ունէր կողմերէն որեւէ մէկուն տեսանկիւնէն դիտուած , այս պատճառով իսկ , կողմերէն որեւէ մէկուն համար Հրանդ Տինքի կեանքը « պաշտպանելու արժանի » չէր նկատուած ... իրարու աչքը հանել ջանացողները կը նոյնանային , կը միաձուլուէին հայերու հանդէպ ունեցած իրենց թշնամանքի զգացումներով ... Պէտք է ըսել , որ Հրանդին սպաննութենէն ետք տեղի ունեցած հարցաքննութիւններն ու դատավարութիւնները , հայերու հանդէպ առկայ թշնամանքին քօղը պատռեցին ...:

Հրանդին սպաննութեան առաջին օրերուն , « իրականութեան մէջ այս ոճիրը մեզի դեմ գործուած է ... » ըսողները , « թոյլ պիտի չտանք , որ Սարի Կեալին երգը անգարայի դատարաններուն մէջ կորսուի ... » ըսողները , իրենց խօսքը շուտ մոռցան ...

Զիս խորապէս կ'ամչցնեն , ո՛չ միայն Հրանդին սպաննութեան նախորդած , ոճիրի պատրաստութեան ընթացքին կատարուածներն ու գրուածները , այլ ոճիրին գործադրութեան հանգամանքներն ու անոր յաջորդած հարցաքննութիւններու եւ դատավարութեան եղանակի ողջ ընթացքը ...

Եւ հիմա , իրականութիւնը բացայայտելու ճանապարհին , մեր ձեռքին տակ գտնուող բազմաթիւ տուեալներու , տեղեկութիւններու եւ գիտելիքներու կողքին , ունինք նաե՛ւ Հրանդին մեզի կտակած այս պատգամը ե՛ւս՝

« Նուագագոյնը , գոնէ մենք անտարբեր պիտի չմնանք , եւ յառաջիկային դոյզն նեղութեան դէմ յանդիման գալու պարագային , այսօր անտարբեր գտնուողներու օձիքէն պիտի բռնենք ...»



Ուժն եւ կեանք բաւածին չափով՝

Խոստումն...

Խոստումն ... պիտի կատարեմ , Հրանդ ...

Թրքերէնէ թարգմանեց՝

ՍԱԼԲԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ծանօթ: Հրանդ Տինքի փաստաբան՝ Ֆէթիյէ Չէթինի այս գրութիւնը՝ վերջաբանն է անոր վերջերս Հրատարակուած « Ամօթ Կը Զգամ – Հրանդ Տինքի Սպաննութեան Դատավարութիւնը» գիրքին:

Յ.Գ. « Սարի Կեալին » - Սարի Աղջիկ – ը , Հրանդին նախասիրած երգն էր , որ իր սպաննութիւնէն ետք , իր դատը պաշտպանողներուն , իր ընկերներուն եւ իր համակիրներուն երգը դարձաւ, որոնք « Սարի Կեալին » ը խմբերգի վերածած կ'երգէն դատարաններուն առջեւ եւ յանուն արդարութեան , Հրանդին համար իրենց կազմակերպած հաւաքներու եւ քայլարշաւներու ընթացքին:

Դարադաժի Անդոհանք Եւ... Մարտակոչեր Մերթ Գասպար Տէրաւրեան, Պէյրութ,

1 Փետրուար 2015

Անտարբեր ու ձեռնպահ լինել

Ոճիրի հանդէպ՝ միեւնոյն է

Թէ՛ մասնակից լինել նրան...:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ըմբոստացումը՝ պարտականութեանց սրբազնագոյնն է-

ԺԱՆ-ԺԱԲ ՌՈՒՍՍՕ

Դարադարձի այս մեծ ստուգատեսին, Հայութեան «անելիք»ը՝ գլխաւորաբար, մեր ՆԵՐՔԻՆ ճակատին վրայ է... ոչ՝ ԱՐՏԱՔԻՆ:

Մեր ներքին ճակատի ցաւերը առանց յաղթահարելու, եւ ախտերը առանց դարմանելու՝ արտաքին ճակատի վրայ մեր կազմակերպած բոլոր ցուցադրական, դիմակահանդէսային ու ֆոլքլորային միջոցառումները՝ անցողիկ են, պղպջակային եւ ինքնախաբէական: Եւ այդ բոլորը մեզ արգահատելի եւ խղճալի կը դարձնեն միջազգային հանրային կարծիքին առջեւ:

Ժողովուրդ մը, որ չէ դարմանած իր ներքին ախտերը եւ... օտարներէն կը սպասէ արդարութիւն՝ անոնց վրայ կը թողու մուրացիկի տպաւորութիւն, եւ անոնք՝ մուրացիկի մը նետուած հացի կտորէ մը տարբեր բան չեն նետեր այդ մուրացիկին վրայ...:



Հայութիւնը ազնիւ օտարներէն աջակցութիւն եւ արդարութիւն կրնայ ակնկալել միայն այն պարագային՝ երբ արդէն կրցած է փրկուիլ իր ներքին երկու ծանրակշիռ ախտերէն, որոնք կը հիւծեն զինք... արտասահմանի մէջ՝ իր անտիրականութիւնն ու անկեղծանշանութիւնը, իսկ Հայաստանի մէջ՝ ապագային օլիգարխներու միահեծան բռնատիրութիւնը...: Այսինքն, արտասահմանի մէջ՝ Տարագիր Արեւմտահայութիւնը կեղծանական, ներկայացուցչական (ընտրովի) եւ միակ լիազօր մարմնի մը մէջ խմբելէն առաջ, իսկ Արեւելահայաստանի մէջ՝ ապագային օլիգարխներու միահեծան բռնատիրութիւնը վերացնելէ առաջ, Հայութիւնը իրաւունք չունի յուսալու ազնիւ օտարներու նեցակցութիւնը: Այս երկու մահացու ախտերը յաղթահարելէ առաջ, Հայութիւնը չի կրնար յարգանք եւ ուշադրութիւն պահանջել միջազգային հանրային կարծիքէն, եւ անկէ ակնկալել շօշափելի աջակցութիւն:

Այս ներքին երկու մահաբեր ախտերուն յաղթահարումը ներքին կարգով պիտի փաստէ թէ՛ Հայութիւնը որոշած է ապրիլ ու գոյատեւել, եւ այսպիսով հզօրացած՝ պիտի շահի յարգանքն ու վստահութիւնը ազնիւ օտարներուն, եւ նոյնիսկ՝ յարգանք պարտադրել անազնիւ, թշնամի օտարներուն: Այսպիսով միայն Հայութիւնը դադրած պիտի ըլլայ անզօր մուրացիկ մը նկատուելէ, եւ դարձած՝ հզօր եւ ինքնավստահ պահանջատէր մը, որ տիրութիւն կ'ընէ արտասահմանի թէ՛ Հայաստանի մէջ: Ուրեմն այսօր, դարադարձի այս մեծ ստուգատեսին՝ Հայութեան գլխաւոր «անելիք»ն է՝

Ա) Սփիւռքի մէջ, համահայկականօրէն ստեղծումը՝ Տարագիր Արեւմտահայութեան Համաշխարհային Քոնկրէսին (SUՀՔ), եւ

Բ) Հայաստանի մէջ, համահայկականօրէն վերացումը՝ ապագային օլիգարխներու միահեծան բռնատիրութեան համակարգին:

Եւ այս երկու առաջադրանքները իրարու լրացուցիչ հրամայականներ են, որ միասնաբար պիտի նուաճեն ճշմարիտ, առողջարար եւ կենարար համահայկականութիւնը, որուն կարիքը ունին՝ մեր հաւաքական գոյամարտին երեք ջոկատները՝ Տարագիր Արեւմտահայութիւն, Արեւելահայաստան եւ Արցախ: Այս երկու առաջադրանքներու մեկնարկը գէթ՝ հարկ է որ սկիզբ առնէ դարադարձի այս մեծ ստուգատեսին, որպէսզի՝ Հայութիւնը մեծ հիասթափութիւն մը չապրի 2015-ին: Այս է մեր ապրած անդոհանքին պատճառը եւ՝ մարտակոչերուն դրդապատճառը:

Կը ձայնակցինք թրքագէտ Արտակ Շաքարեանի սա գնահատականին. –



«Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով արուած քայլերը մինչեւ այսօր՝ եւ որական չէի գնահատի: Մեծ հիասթափութիւն է սպասելու հայ հասարակութեանը, որովհետեւ մենք մեծ ջանք ենք ներդնում պատկերացնելու համար, թէ 100-ամեայ տարելիցը ինչէ՛ր կը փոխի: Դրանից զատ՝ Ցեղասպանութեան ճանաչումից յետոյ մեր յաջորդ քայլերը չգիտենք: Այս իմաստով մենք շատ բան ունինք անելու, ոչ թէ մի քանի միջոցառում կազմակերպելը, կամ երկրորդ սորտի ինչ-որ մի ֆիլմ նկարահանելը...» («ՀԱՅԱՍՏԱՆ», Աթենք, 15 Դեկտեմբեր 2014):

Մեր անդոհանքէն բխող մարտակոչերուն յանգեցանք հետեւեալ խորհրդածութիւններուն լոյսին տակ:

Ա. ՏԱՀՔ-ի ստեղծումին հրամայականը

Շահան Շահնուր յետ եղեռնեան մեր «ՆԱՀԱՆՁԸ ԱՌԱՆՅ ԵՐԳԻ»ն բացայայտեց եւ մեզ զօրակոչեց հետեւեալ բառերով.–

«Ազգ, Կռուէ՛ ամբողջութեամբը միսերուդ:

Եթէ միսերդ ինկան պատառ-պատառ, կռուէ դնդերներովդ, ջիղերովդ, երակներովդ:

Եթէ պայքարը զանոնք լափեց՝ կռուէ ոսկորներովդ:

Եթէ ոսկորներդ փշրուեցան, կռուէ ծուծովդ:

Եթէ ծուծ չմնաց, կռուէ աճիւններովդ:

Եթէ ասոնք ալ տարտղնուեցան, կորսուեցան, չքացան, այն ատեն կռուէ՛ ազգ, Հերոսովդ»:

Հայութիւնը այսօր կարիքը ունի ազգային հերոսներու, Ազգային Հերոս Անդրանիկի հաւատարիմ յաջորդներու՝ մեր ներկայի համակողմանի գոյամարտին մէջ, որ սահմանափակուած չէ ռազմական ոլորտին մէջ, այլ կ'ընդգրկէ միւս բոլոր ոլորտներն ալ հաւասարապէս...:

Անկախ պետականութեան կառուցումի ոլորտը կը պահանջէ՝ պետական մտածելակերպով օժտուած հերոսներ, որոնք քաջ գիտեն թէ՛ անկախ ու գերիշխան պետութիւն կառուցելու նախապայմանը անկախ ու գերիշխան, այսինքն Դարադարձի այս մեծ ստուգատեսին, Հայութեան «անելիք»ը՝ զլիաւորաբար, մեր ՆԵՐՔԻՆ ճակատին վրայ է... ոչ՝ ԱՐՏԱՔԻՆ:

Մեր ներքին ճակատի ցաւերը առանց յաղթահարելու, եւ ախտերը առանց դարմանելու՝ արտաքին ճակատի վրայ մեր կազմակերպած բոլոր ցուցադրական, դիմակահանդէսային ու ֆոլքլորային միջոցառումները՝ անցողիկ են, պղպշակային եւ ինքնախաբէական: Եւ այդ բոլորը մեզ արգահատելի եւ խղճալի կը դարձնեն միջազգային հանրային կարծիքին առջեւ:

Ժողովուրդ մը, որ չէ դարմանած իր ներքին ախտերը եւ... օտարներէն կը սպասէ արդարութիւն՝ անոնց վրայ կը թողու մուրացիկի տպաւորութիւն, եւ անոնք՝ մուրացիկի մը նետուած հացի կտորէ մը տարբեր բան չեն նետեր այդ մուրացիկին վրայ...:



Հայութիւնը ազնիւ օտարներէն աջակցութիւն եւ արդարութիւն կրնայ ակնկալել միայն այն պարագային՝ երբ արդէն կրցած է փրկուիլ իր ներքին երկու ծանրակշիռ ախտերէն, որոնք կը հիւծեն զինք... արտասահմանի մէջ՝ իր անտիրականութիւնն ու անկեղծացումները, իսկ Հայաստանի մէջ՝ ապագային օլիգարխներու միահեծան բռնատիրութիւնը...: Այսինքն, արտասահմանի մէջ՝ Տարագիր Արեւմտահայութիւնը կեղծական, ներկայացուցչական (ընտրովի) եւ միակ լիազօր մարմնի մը մէջ խմբելէն առաջ, իսկ Արեւելահայաստանի մէջ՝ ապագային օլիգարխներու միահեծան բռնատիրութիւնը վերացնելէ առաջ, Հայութիւնը իրաւունք չունի յուսալու ազնիւ օտարներու նեցակցութիւնը: Այս երկու մահացու ախտերը յաղթահարելէ առաջ, Հայութիւնը չի կրնար յարգանք եւ ուշադրութիւն պահանջել միջազգային հանրային կարծիքէն, եւ անկէ ակնկալել շօշափելի աջակցութիւն:

Այս ներքին երկու մահաբեր ախտերուն յաղթահարումը ներքին կարգով պիտի փաստէ թէ՛ Հայութիւնը որոշած է ապրիլ ու գոյատեւել, եւ այսպիսով հզօրացած՝ պիտի շահի յարգանքն ու վստահութիւնը ազնիւ օտարներուն, եւ նոյնիսկ՝ յարգանք պարտադրել անազնիւ, թշնամի օտարներուն: Այսպիսով միայն Հայութիւնը դադրած պիտի ըլլայ անզօր մուրացիկ մը նկատուելէ, եւ դարձած՝ հզօր եւ ինքնավստահ պահանջատէր մը, որ տիրութիւն կ'ընէ արտասահմանի թէ՛ Հայաստանի մէջ: Ուրեմն այսօր, դարադարձի այս մեծ ստուգատեսին՝ Հայութեան գլխաւոր «անելիք»ն է՝

Ա) Սփիւռքի մէջ, համահայկականօրէն ստեղծումը՝ Տարագիր Արեւմտահայութեան Համաշխարհային Քոնկրէսին (SUՀՔ), եւ

Բ) Հայաստանի մէջ, համահայկականօրէն վերացումը՝ ապագային օլիգարխներու միահեծան բռնատիրութեան համակարգին:

Եւ այս երկու առաջադրանքները իրարու լրացուցիչ հրամայականներ են, որ միասնաբար պիտի նուաճեն ճշմարիտ, առողջարար եւ կենարար համահայկականութիւնը, որուն կարիքը ունին՝ մեր հաւաքական գոյամարտին երեք ջոկատները՝ Տարագիր Արեւմտահայութիւն, Արեւելահայաստան եւ Արցախ: Այս երկու առաջադրանքներու մեկնարկը գէթ՝ հարկ է որ սկիզբ առնէ դարադարձի այս մեծ ստուգատեսին, որպէսզի՝ Հայութիւնը մեծ հիասթափութիւն մը չապրի 2015-ին: Այս է մեր ապրած անդոհանքին պատճառը եւ՝ մարտակոչերուն դրդապատճառը:

Կը ձայնակցինք թրքագէտ Արտակ Շաքարեանի սա գնահատականին. –

«Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով արուած քայլերը մինչեւ այսօր՝ ես դրական չեմ գնահատի: Մեծ հիասթափութիւն է սպասելու հայ հասարակութեանը, որովհետեւ մենք մեծ ջանք ենք ներդնում պատկերացնելու համար, թէ 100-ամեայ տարելիցը ինչե՛ր կը փոխի: Դրանից զատ՝ Ցեղասպանութեան ճանաչումից յետոյ մեր յաջորդ քայլերը չգիտենք: Այս իմաստով մենք շատ բան ունինք անելու, ոչ թէ մի քանի միջոցառում կազմակերպելը, կամ երկրորդ սորտի ինչ-որ մի ֆիլմ նկարահանելը...» («ՀԱՅԱՍՏԱՆ», Աթէնք, 15 Դեկտեմբեր 2014):



Մեր անդոհանքէն բխող մարտակոչերուն յանգեցանք հետեւեալ խորհրդածութիւններուն լոյսին տակ:

Ա. ՏԱՀՔ-ի ստեղծումին հրամայականը

Շահան Շահնուր յետ եղեռնեան մեր «ՆԱՀԱՆՁԸ ԱՌԱՆՅ ԵՐԳԻ»-ն բացայայտեց եւ մեզ զօրակոչեց հետեւեալ բառերով.-

«Ազգ, Կռուէ՛ ամբողջութեամբը միսերովդ:

Եթէ միսերդ ինկան պատառ-պատառ, կռուէ դնդերներովդ, ջիղերովդ, երակներովդ:

Եթէ պայքարը զանոնք լափեց՝ կռուէ ոսկորներովդ:

Եթէ ոսկորներդ փշրուեցան, կռուէ ծուծովդ:

Եթէ ծուծ չմնաց, կռուէ աճիւններովդ:

Եթէ ասոնք ալ տարտղնուեցան, կորսուեցան, չքացան, այն ատեն կռուէ՛ ազգ, Հերոսովդ»:

Հայութիւնը այսօր կարիքը ունի ազգային հերոսներու, Ազգային Հերոս Անդրանիկի հաւատարիմ յաջորդներու՝ մեր ներկայի համակողմանի գոյամարտին մէջ, որ սահմանափակուած չէ ռազմական ոլորտին մէջ, այլ կ'ընդգրկէ միւս բոլոր ոլորտներն ալ հաւասարապէս...:

Անկախ պետականութեան կառուցումի ոլորտը կը պահանջէ՝ պետական մտածելակերպով օժտուած հերոսներ, որոնք քաջ գիտեն թէ՝ անկախ ու գերիշխան պետութիւն կառուցելու նախապայմանը անկախ ու գերիշխան, այսինքն ազգային անկախ տնտեսութիւն ունենալն է: Իսկ քաղաքական ուժ ներկայացնելու համար, աշխարհացրիւ եւ օտարահպատակ Սփիւռքի Տարագիր Արեւմտահայութեան բեկորները հարկաւոր է համախմբել համահայկական ոգիով՝ միակ կեդրոնական կառոյցի մը մէջ, անոնց տալու համար միաւորուած քաղաքական հաւաքականութեան հանգամանք եւ միջազգային կարգավիճակ: Որովհետեւ՝ Տարագիր Արեւմտահայութեան քաղաքական լիազօր կեդրոնի բացակայութեան, կը տիրէ աւատապետական տրոհուածութիւն եւ՝ անկարելի դարձնելով հայկական քաղաքական կեդրոնական հանրային կարծիքի ստեղծումը, եւ այս «համահայկական քաղաքական պարապ»էն կ'օգտուին ազգին թշնամիները եւ զայդ կը լեցնեն իրենց քարոզչութեամբ եւ գաղափարականով... որ ոչ միայն ապազգային է, այլեւ՝ հակազգային:

Հանճարեղ Եղիշէ Չարենց մեր համահայկական քաղաքական ու կազմակերպչական ուժին մէջ կը տեսնէր մեր փրկութիւնը եւ յեղափոխական ռոմանտիզմով կը յուսար՝

Վերադառնան պիտի դեռ

Հազար սրտեր ՏԱՐԱԳԻՐ

Ցրուած հողմով հրաքիրտ



Մրտեր քանի՛ դեռ քանի՛

ՀՈՂՆ են իրենց անրջում...

Բայց մենք այսօր Տարագիր Արեւմտահայութիւնս, տակաւին կը յիշե՞նք մեր հողերը... կ'անրջե՞նք հասնիլ մեր հողերուն... Արարատի փեշերուն..., երբ մեծ բացական համահայկականութիւնն է եւ ազգային ամէն կառոյց տրոհուած է եւ՝ կուսակցականացած՝ եկեղեցին, մամուլը, դպրոցները, մշակութային ու մարզական միութիւնները մինչեւ անգամ բարեգործական կազմակերպութիւնները, որոնց մեծագոյնը այսօր կը գտնուի ամերիկեւսիոնական հակակշիռին տակ, այսինքն՝ մեր թշնամիներու հակակշիռին տակ, որուն շօշափելի փաստն է՝ Մելգոնեան Հայ Լոյսի Տաճարին փակումը..., եւ կամ՝ Մեծ Եղեռնի հարիւրամեայ տարելիցին համար, սիոնամասոնական «անմոռուկ»ին ընտրութիւնը որպէս խորհրդանիշ... որուն հայկականը՝ Ծիծեռնակաբերդի Եղեռնի անփոխարինելի Յուշակոթողն է:

Հողին կառչելու շեփոր մը հնչեցուց նաեւ տեսլապաշտ յեղափոխական Վազգէն Շուշանեան, գոչելով՝ «Կ'անցնին բոլոր փոթորիկներն ու բոլոր ահագնադորդ պատերազմները, կ'անցնին բոլոր հորդաներն ու բարբարոսները, կ'անցնին բոլոր հերետիկոսներն ու բոլոր պզտիկ պարոնները՝ իրենց սուտ իմաստութեամբ: Հայոց ազգ՝ քայլերդ դուրս մի նետեր այս հողերէն: Եթէ նոյնիսկ ստիպուած ըլլաս՝ անգամ մը եւս ողնայարդ ծռել, ողջ հասակովդ ինկիր մեր կարմիր հողերուն վրայ, որուն վրայ սողա՛լը աւելի լաւ է քան թէ՛ գլուխ ցցելը ուրիշի սահմաններուն վրայ, քանզի ճակատագիրդ հոս է, եւ սրբութիւնդ՝ հոս, վասնզի հոսկէ է միայն, որ վաղը բոլոր ցորենները կրնան բարձրանալ գեղուղէ՛շ՝ բոլոր ակօսներէն...: Մենք, երիտասարդներս, կ'ուզենք հաւատալ հաւատարմութեամբ թէ՛ այս ժողովուրդը չ'է մեռած ու պիտի որոշէ ապրիլ...: Թողու՛ որ արտասահմանի հայութիւնը վերածուի անբաղձալի մուրիկներու, անպատիւ շահադէտներու եւ անազգ փերեզակներու բազմութեան մը, յանցանք մըն է քաղաքակրթութեան դէմ եւ կը նշանակէ՝ պատրաստել դամբարանը վաղնջական ժողովուրդի մը...»:

Արեւմտահայաստանի մեր հողային պահանջատիրութիւնն է՝ ուրեմն, որ շօշափելի նպատակ մը պիտի տայ մեր ազգապահպանումի քարոզին, եւ՝ Տարագիր Արեւմտահայութեան աշխարհասփիւռ եւ օտարապատակ բեկորները պիտի փրկէ՝ անազգ փերեզակներու բազմութեան մը վերածուելու ստոյգ վտանգէն, երբ անոնք հետեւին «ուր հաց՝ հոն կաց» նշանաբանին: Եւ մեր հողային պահանջատիրութիւնը գործնականացնելու համար՝ Միջազգային Հանրային Իրաւունքը մեզմէ կը պահանջէ, որ մեր բեկորները վերակազմակերպենք՝ որպէս միաւորուած հայրենագուրկ Արեւմտահայութիւն, զայն օժտելով՝ միջազգային հաւաքականութեան կարգավիճակով... այսինքն՝ ստեղծելով ՏԱՀՔ-ը...:

Եւ՝ Վահան Թեքեան, «Մփիւռք» վերնագրով իր քերթուածին մէջ, երբ հարց կու տայ թէ՛ ինչ մաղթանք կրնայ ընել անոնց, տարագիրներուն, որ «անոնք ունենան կեա՞նք մը անվի՛շտ ու հանգչի՞ն այլեւս...», թէ ոչ՝ «վրիժակեզ այրին, ու ետ նային միշտ» չմոռնալով իրենց հայրենագրկումը, Արեւմտահայաստանի հայաթափումը եւ բռնազաւթումը...: Ան



բախտաւոր եղաւ, որ չտեսաւ Արեւելահայաստանի ալ հայաթափումը, Արեւելահայութեան ալ հայրենագրկումը, այս անգամ ալ՝ ոչ թէ թուրքին պարտադրած Տարագրութեամբ այլ... հայանուն օլիգարխներու համակարգին անարդարութեամբ:

Թեքէեան կը մաղթէր, որ տարագրեալները «վրիժակէզ այրին, ու ետ նային միշտ» չմոռնալու համար իրենց տարագրեալի, հայրենագրկեալի վիճակը, եւ փորձելու՝ հայրենադարձութիւնը, հողային պահանջատիրութեան պայքարով... ՏԱՀԲ-ի ստեղծումով:

Թեքէեան կ'ըսէր՝ «Ես պատրաստ եմ ամէն ժամ սլանալու արդար դատին ընդառաջ՝ ըմբոստութեամբ սրբազան, ու շանթաբորբ կենալու անիրաւին գլխուն վրայ, արհամարհելով նկրտումները յետին, հանգիստն ու բարութիւնն ալ տկար...»: Տարագիր Արեւմտահայութիւնը պիտի կարողանա՞ յ հետեւիլ անոր...: Այս է ցաւատանջ հարցումը մեր անդոհանքին:

Շարունակելի

Համակարգի Վերացման Հրամայականը

Գրական-Մշակութային

ՆԵՐՀԱՅԵՑՈՒՄ* / Արամ ՍԵՓԵԹ-ՃԵԱՆ 05/11/2014

...«Թողուցէք զիս... մինակ,

Այնքան մինակ, եւ այնքան լուռ,

որ լսեմ տրոփը սրտիս...»:

Դ. Վարուժան

Մենութեան պահն է,

որ կապրիմ ու...

«կը լսեմ տրոփը սրտիս»:

Ձայներ կան

Լռութեան մէջ:

Ձայներ, որոնք

«կեանք մը» կ'արժեն

Ներաշխարհիս դուռը կը թակեն: Ամէն տարի Ապրիլին, ուխտագնացութիւն մը կը կատարեմ դէպի ներաշխարհիս Անհունը: Ծանօթ եւ անծանօթ ներքին ուժեր կ'աղմկեն այնտեղ, որոնք մերթ կը վերյայտնուին իբրեւ պատկեր ու խոհեր... մերթ՝ դասական երաժշտութիւն, հատուածներ հոգեհանգստեան համանուագներէ կամ պատարագներէ...: Վիշտս կը քաղցրանայ կարծէք հոգիէս ներս, ու ես վերստին կ'ապրիմ այն պահս, երբ, իբրեւ ուխտաւոր կը գտնուէի Ճիշդ այն Հողին վրայ, որ 1915-1918 եղեր էր անշիրիմ գերեզմանատունը մեր մէկ միլիոն ու կէս նահատակներուն:

Հալէպէն մինչեւ Տէր-Զօր ինքնաշարժով երեք ժամուան ճանապարհ էր: Տեղ-տեղ «ահեղավագ Եփրատն» էր, որ կը գծագրուէր բնութեան մէջ: Եփրա՛տը... որ կը կալանաւորէր մտածումներս ու կը վերարտադրէր հազար անգամ հազար անպատանք դիակներուն իբրեւ անծէս յորդահոս ջուր կենդանի, ծնած լեռնաշխարհէն հայկական, որ չհասաւ սակայն ըլլալու «ջուր ըմպելի», յագեցնելու համար քաղցն ու ծարաւը հազար անգամ հազար նօթի ու ծարաւ տարագիրներու:



Ու ես՝ Եփրատի կամուրջէն կ'ուղղուիմ դէպի Նահատակաց Յուշարձան-Մատուռը:

Տէր-Զօր: Կիրակի եւ Ապրիլ 24: Այսինքն՝ կիրակնօրեայ ծէս ու պատարագ:

Անձնատուր ներքնահոս ալեկոծումներուս, կը մօտենամ յուշաքարերուն... ակնածանքով:

Խաչքար... եւ անմար բոցը կրակին:

Զգրուած բանաստեղծութիւն:

Մատներս կը խրեմ սեւ հողին մէջ, ափ մը հող առնելու համար հետս եւ յանձնելու արուեստագէտ բարեկամիս, որ կ'ուզեր վերստեղծել իրմէ ներս Վարուժանին «Կարմիր հողը» քերթուածին վերընթերցումին պարգեւած գեղարուեստական պահերը: Ու հողը կը սրբանայ մատներուս մէջ: Կըլլայ սի՛րտը բաբախուն՝ Կոմիտասին ու Վարուժանին: Կ'ըլլայ երգ ու քերթուած՝ մտածումներուս մէջ, հորովել ու շարական՝ շրթներուս վրայ, եւ արցունք ու թախիժ՝ հոգիիս խորը: Սա հո՛ղը... որ քիչ առաջ թերեւս պարզ հող մըն էր տակաւին, մինչ հիմա արդէն կ'այրէ մատներս ու կ'ըլլայ հրակէզ յիշողութիւն...: Գիտեմ, յուշ-յիշատակներն են որ շունչ եւ հոգի կու տան այս հողին:

Հոգեհանգի՛ստ կը կատարուի այստեղ, Յուշարձան-Մատուռին ստորգետնեայ խորհրդատունը: Կ'իջնեմ վար սանդուխներու պարոյրէն, ուրկէ վայրահակ նայուածքս Յուշասին կոթողը կը պարուրէ:

Ոսկերոտիքն է նահատակներուն: Սրբացած ու նշխար դարձած ոսկերոտիք: Կոմիտասեան «Տէր ողորմեա՛»-ն կ'երգուէր բազկատարած եւ «Տուր աշխարհիս խաղաղութիւն» կ'աղերսէր:



Ծէսն ու պատարագը՝ թող որ շարունակուէր վերը, խորանէն, իսկ ես ըլլայի անձնատուր մեծագոյն խորհուրդին՝ լռութեան ձայնանիշերը վերծանող: Ըլլայի այդ պահուն խորհրդակիր պատարագիչ մը՝ անսքեմ-անվեղար, վառէի յոյսի եւ յոյսի կանթեղ-մոմ մը, երկուք-երեք... «վասն ձեր եւ բազմաց», բոլորին, «որք անկան յընթացս մեծ եղեռնի»: Այժմ, թողէք զիս մինակ, նահատակաց սրբազան Յուշասիւնին հետ, որպէսզի անոր մէջ ողջունեմ կենդանացած ու վերակենդանացած խորհուրդը մեր լինելութեան եւ այս յուշաքարին մօտ, թողէք որ ըլլամ հայրենի բանաստեղծին խորհրդակից... «չոքեմ ծունկի, քարանամ այստեղ առանց արցունքի...» ու շարունակեմ անաւարտ գրոյցս սրբացած ու քարացած նշխարներուս հետ:

Ապա՝ կ'ուզէի «մեռելներուս իբրեւ խաչ» երգեր յօրինել ու ձօնել զանոնք անապատին մէջ անշնչացած, բայց թոռներուս մանկական ճիչերովը վերակենդանացած երէց երկու եղբայրներուս: Անոնց, որոնք ապրեցան մէկ-երկու տարուան կեանք մը միայն:

Համբուրելի սրբութիւն:

Որպէսզի, յետոյ, վերադառնամ իմ աշխարհս, ուր նահատակներու թիւին հաւասար քար ու նշխար վերածուին լուսեղէն սիւնի, ստանան մարմին ու երգեն փառքը ՀԱՅՈՒՆ ՀՐԱՇԱԼԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ:

Այժմ, անցեալս աղմկող այս էջերը կրկին կ'ալեկոծեն ներաշխարհս... եւ արդարութիւն կը պահանջեն: Էջեր, որոնք թերթ առ թերթ կը խուժեն դէպի յիշողութեանս աւազանը իբրեւ պատկեր եւ յուշ-քանդակ, կամ ցանուցիր եղած խոհերու յօդուածներ, որոնց մէկտեղումով ահաւասիկ կը կազմուին էջերը սոյն հատորին, իբրեւ խաչքոռ նուիրական:

* («Ձայներ լռութեան մէջ» գրքի նախաբանը)

ԼԵՒՈՆ ՉԱԲԷՆ ՍԻՐՄԷԼԵԱՆ

Յակոբ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ


Հեղինակ՝ Վետա Յարութիւնեան

Սովորաբար մեր մեծ գրողներուն հետ մեր առաջին հանդիպումը կ'ըլլայ դպրոցական գրասեղաններուն վրայ, ուր տարուէ-տարի մեր գրական անդաստանին մէջ թափառելով, անոնց կենսագրութեանն ու անոնց գրածներէն պատառիկներու հետ հաղորդուելով, մակերեսային ծանօթութիւն մը կ'ունենանք անոնց հետ, որը հիմնական գիտելիքի կը վերածուի, երբ համալսարանի մէջ շարունակենք մասնագիտանալ գրականութեան ճամբով:

Այս հանգրուանին, կամ նոյնիսկ ազատ ընթերցանութեան ընթացքին, նորանոր անուններու կը ծանօթանանք, որոնք կամ անտեսուած են դասագիրքերը պատրաստողներու կողմէ, կամ ալ յարմար չեն նկատուած աշակերտական տարիքի համար ու չեն ընդգրկուած դասագիրքերու մէջ:

Կը ծանօթանանք ու երբ անոնց գրական մեծութեամբ կը հիանանք, կ'ափսոսանք որ այսքան ուշ ճանչցած ենք զիրենք:

Ահա, այսպիսին եղած է Լեւոն Զաւէն Սիւրմէլեանը, որուն մասին լուրջ ուսումնասիրութիւն մը լոյս տեսաւ վերջերս, հեղինակութեամբ Վետա Յարութիւնեանի եւ խմբագրութեամբ Սերգէյ Գալստեանի:



Գիրքը աշխատասիրուած է ժամանակին, որպէս ատենախօսութիւն գիտական աստիճան ստանալու համար, եւ պարզ է, որ ոեւէ անհատ իր աւարտաճառը, կամ ատենախօսութիւնը պատրաստելու համար, պիտի ուսումնասիրէր նիւթը իր ամենայետին մանրամասնութիւններով. եւ այս գիրքի պարագային, այդպէս ըլլալով հանդերձ, ընթերցողը կը զգայ, որ հեղինակը պարտականութիւն մը խղճմտօրէն կատարած ըլլալէ ու չոր ու ցամաք ուսումնասիրութիւն մը ներկայացնելէ աւելի, մեծ սիրով ու յարգանքով մօտեցած է իր հերոսին, Լ.Զ. Սիւրմէլեանին ու անոր անձին ու գրականութեան խորը թափանցելով, ճանչցած է մեծ գրագէտն ու մեծ հայրենասէրը:

Տաւր տարեկան տղեկը, որ Զաւէնն էր, ցեղասպանութեան լեղին ճաշակած ու հրաշքով փրկուած, չէր կրնար տարբեր ըլլալ ու կապուած չըլլալ թուրքին կողմէ աւերուած իր հայրենի ծննդավայր Տրապիզոնին, որուն մասին եղած է իրեն համաշխարհային ճանաչում բերած «I Ask You Ladies And Gentlemen» (Ձեզ եմ դիմում, տիկնայք եւ պարոնայք) անգլերէնով գրուած գիրքը:

«...Թոյլ տուէք որ յիշեցնեմ ձեզի, թէ ես ալ մէկն եմ անոնցմէ, որ ետ դարձան մահուան ճամբայէն եւ որ իրենց սիրտերուն մէջ կը կրեն անմահական բաղձանքները հայութեան...»: Այս տողերը կարծէք որպէս բնաբան դաջուած են գիրքի առաջին իսկ էջին վրայ, վկայելու համար, որ գործ ունինք իր արմատներուն հաւատարիմ գրողի մը հետ:

«...Չկայ մէկը, որ հայ լեզուն սիրէ ինձմէ աւելի խորապէս», ըսած է Սիւրմէլեան, որ շրջանէ մը ետք միայն անգլերէնով հեղինակած է: Այս եւ նման արտայայտութիւններ ու խոստովանութիւններ մէջբերելով, գիրքին հեղինակը՝ Վ. Յարութիւնեան, կ'արտացոլացնէ Սիւրմէլեանի անսակարկելի հայրենասիրութիւնը, որ հէնքը կը կազմէ անոր ամբողջ գրականութեան:

«Սիւրմէլեան ժամանակակից ամերիկեան ռէալիստական արձակի տաղանդաւոր ներկայացուցիչներից մէկն է...», կ'ըսէ Յարութիւնեան, երբ կ'անդրադառնայ մանրամասնօրէն Սիւրմէլեանի անգլերէնով երկնած գրականութեան:

Վետա Յարութիւնեան իր ուսումնասիրութեան ուղիին «քարտէսը» գծած է հետեւեալ հանգրուաններով, որոնք տեղադրուած են հինգ գլուխներու մէջ.



Ա - Կենսագրական յամառօտ ակնարկ

Բ - «Լոյս Ձուարթ»ի ստեղծագործական պատմութիւնը

Գ - Միրմէլեանի արձակը

Դ - Միրմէլեանի թարգմանութիւնները

Ե - Գրագիտական եւ Հասարակական-հրապարագրական գործունէութիւնը

Եւ Վերջաբան.

Հեղինակը Միրմէլեանի կենսագրական ամփոփ գիծերուն մէջ, որ կը տարածուի 30 էջերու վրայ, ի յայտ կը բերէ անոր իսկական դիմագիծն ու հոգեկան աշխարհը, մտածելակերպը, փափաքներն ու ծրագիրները, նկարագրային հարուստ աշխարհը, մէկ խօսքով ընթերցողին դիմաց կը կանգնեցնէ գրողը իր բոլոր երեսներով ու յատկութիւններով, որոնք հէնքն ու մագոգը կազմած են անոր հարուստ գրականութեան: Ձինք ներկայացնելէ ետք կ'անցնի անոր «Լոյս Ձուարթ» բանաստեղծութիւններու հատորեակին, որուն մասին այնքան տպաւորիչ խօսք ըսած է Վ. Թէքէեան:

Վ. Յարութիւնեան, Թէքէեանի գնահատականին կը միացնէ իր անձնական գնահատականը, երբ կ'ըսէ. «...ընդամենը երկու տասնեակ բանաստեղծութիւն ամփոփող մի գրքոյկ էր դա, որ սակայն իսկական արուեստագէտի ծնունդն էր ազդարարում...պատանի հեղինակը գրական աշխարհ էր մտնում ճշմարիտ բանաստեղծի հոգով ու մեծ ասելիքով»:

Վահան Թէքէեան ձեռով մը ուղեկիցը դարձած է Միրմէլեանի որպէս գրող կազմնաւորման շրջանին: Ան իր քաջալերական խօսքերով ու գնահատական անկեղծ արտայայտութիւններով ներկայ է գիրքի էջերուն վրայ: Յարութիւնեան մէջբերելով մեծ բանաստեղծի խօսքերը, իր աշխատասիրութիւնը դարձուցած է աւելի ամրակուտ, ինչու չէ՛ նաեւ աւելի հարուստ:

«...Այդ եօթը քերթուածներդ եւ վստահ եմ բոլոր միւսներն ալ - տպուած եւ ձեռագիր, որոնք պիտի հաւաքեմ ասոնց հետ, ամենէն գեղեցիկ, հարուստ, յուզիչ եւ կատարեալ քերթուածներն են, որոնք կը ճանչնամ թէ հայերէնի եւ թէ ֆրանսերէնի մէջ եւ որոնք կը զարմանամ գրուած են 16 տարեկան տղու մը կողմէ...», ըսած է Թէքէեան պատանի Միրմէլեանի ուղղած իր նամակին մէջ:

Միրմէլեանի արձակին մասին խօսելով Յարութիւնեան կ'ըսէ. «Լ. Ձ. Միրմէլեանը համընդհանուր ճանաչման արժանացաւ իբր արձակագիր 1945 թուականին հրատարակութեան յանձնելով իր «Ձեզ եմ դիմում, տիկնայք եւ պարոնայք» (I Ask You Ladies And Gentlemen) անդրանիկ վէպը... ինքնակենսագրական այդ վէպը, որ իր արկածներով ու ողբերգական իրադարձութիւններով, իր գեղարուեստական բարձր արժանիքներով արժանացաւ մասնագէտների գովասանքին եւ կարճ ժամանակամիջոցում միջազգային ճանաչում ստացաւ...»:



Արդարեւ մեծ է անոր պատմական-փաստագրական արժեքը, որպէս Մեծ Եղեռնի Գողգոթայի ականատեսի վկայութիւն. Փաստ, Ու. Սարոյեանի բարձր գնահատականը, որ մեջբերուած է, գիրքի հինգերորդ վերահրատարակութեան առթիւ, ինչպէս նաեւ ամերիկեան շարք մը թերթերու գրախօսականները յատկապէս անոր անգլերէն կատարելագոյն լեզուին եւ ոճին մասին:

Վ. Յարութիւնեան հանգամանօրէն կ'անդրադառնայ Սիրմէլեանի անգլերէնով ստեղծագործելու հանգամանքներուն, ուր շատ դիպուկ մեջբերում մը կ'ընէ հեղինակէն. « Ոմանք կը կարծեն թէ լքած եմ հայ գրականութիւնը, քանի որ հայերէն չեմ գրեր այլեւս... չկայ մէկը որ հայ լեզուն սիրէ ինձմէ աւելի խորապէս... Ես կրնամ որպէս ամերիկեան գրող աւելի մեծ չափով ծառայել ժողովուրդիս ու անգլերէն գրելով չեմ դադրիր հայ գրող մը ըլլալէ »:

Խօսելով անոր թարգմանչական աշխատանքներուն մասին, լուսարձակի տակ կ'առնէ Սիրմէլեանի «Մասնայ ծոեր» (Daredevils of Sassoun) հայկական դիւցազներգութեան անգլերէն թարգմանութիւնը, որ հրատարակած է UNESCO-ն 1964-ին, որպէս «լուագոյն պատմուածքներու մատենաշար»ի ընտրեալ գործ, որու արձագանգը ամերիկեան մամուլի մէջ եղած է աննախընթաց, երբ համայն աշխարհին ծանօթացուած է այսպիսի բարձրարժէք դիւցազներգութիւն մը:

«Մասնայ ծոեր»ուն յաջորդեր է հայկական հեքիաթներու հաւաքածոյ մը, «Անմահական խնձորներ» (Apples of Immortality) խորագրով, որ «...միջազգային լայն ճանաչում է գտել, ինչը վկայում են այն բազմաթիւ գրախօսականները, որ տպագրուել են ամերիկեան հեղինակաւոր պարբերականներում...», կ'ըսէ Յարութիւնեան, վկայակոչելով կարգ մը թերթերու անուններ, ինչպէս «New York Herald Tribune», «Literary Journal», «Los Angeles Times», «San Francisco Chronicle» եւ այլ:

Վ. Յարութիւնեան աչքաթող չէ ըրած Սիրմէլեան մտաւորականի եւս մէկ կարեւոր երեսը եւ իր ուսումնասիրութեան վերջին բաժինի առարկան եղած է մեծ գրողի «Գրականագիտական, հասարակական-հրապարակագրական գործունէութիւնը», ուր խօսուած է տուեալ ժամանակի քաղաքական ըմբռնումներու ազդեցութեան մասին ամերիկեան գրականութեան վրայ, ապա Սիրմէլեանի գրականագիտական լուրջ մատնանշումները գրելու արուեստին մասին, ինչպէս նաեւ անոր հրապարակական յօդուածները, բանախօսութիւններն ու անոնց անդրադարձը ամերիկեան մամուլի մէջ:

Հուսկ ապա, գիրքի «Վերջաբան»ին մէջ Վետա Յարութիւնեան իր գնահատական խօսքին մէջ կ'ըսէ. «...Սիրմէլեանի հասուն գրելակերպը, ինքնատիպութիւնը, հարուստ յուզաշխարհը, կեանքի հոգեբանութիւնը նրբօրէն ճանաչելու ունակութիւնը, հասարակական երեւոյթներին գիտակ ըմբռնումը եւ քննադատական մօտեցումը այդ երեւոյթներին, ազգային դարաւոր վշտին վշտակից լինելը, դէպի իրականութիւնը ունեցած գործուն վերաբերմունքը եւ չմարող լաւատեսութիւնը- այս ամէնը լուագոյն երաշխիքներն են այն բանի, որ յանձին Սիրմէլեանի մենք ունենք ոչ-սովորական անգլիագիր հայ մտաւորական»:

Իսկապէս գիտական աստիճան նուաճելու արժանի գործ է այս հատորը, որ իր գրառումէն այսքան տարի ետք ընթերցողի սեղանին կը դրուի:

Գրախօսականներ շատ եղած են, սակայն չեմ կարծեր, որ որեւէ համապարփակ ուսումնասիրութեան նիւթ դարձած է Լ.Զ. Միւրմէլեանի անձն ու գործը: Այնպէս որ այս գիրքը կու գայ կարեւոր բաց մը լեցնելու եւ ծառ մը տնկելու հայ գրականութեան պուրակին մէջ, սակայն ոչ որպէս խաչ,- ինչպէս գրողը ըսած է «Մեռելներու իբրեւ խաչ, ես այս ծառը տնկեցի».- այլ իբրեւ խօսուն վկայարան հայ մեծ գրողի մը:


Մեզի կը մնայ ըսել՝ «Ճաշակեցեք, զի քաղցր է...»:

Աղբիւր՝ ԱԶԳ-ՄՇԱԿՈՅԹ

ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ - 130

ՍՈՎՈՐԵՆՔ ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆԻՑ

Տէրեանը խրատում է. «Միայն սիրով կարելի է անել ամէն ինչ, առանց սիրոյ՝ ոչինչ»: Բոլոր ժամանակների համար ընդունելի մի յորդոր է սա՝ գոնէ գուտ մարդկային յարաբերութիւնները մաքուր պահելու համար, երբ յաճախ որոնում ենք մէկմէկու սիրով նայող հայեացքներ, ներողամի՛տ հայեացքներ ու հազար տարիների հեռուից կարօտում Սովսէ Խորենացու խօսքերին. « Ո՛ր է մեր աչքերի բարի նայուածքը ուղիղներին»:



Լրացաւ Տէրեանի ծննդեան 130-ամեակը: Տարին կը դառնա՞յ արդեօք տէրեանական, օդը կը յագենա՞յ տէրեանական շնչով, կը լցուի՞ նրա պոեզիայից յորդացող թրթիռով: Ականջդ կանչի Ստեփան Զօրեան. «Օդը լիքն էր Տէրեանով, երիտասարդութեան խօսակցութեան նիւթն ամէն տեղ նրա բանաստեղծութիւններն էին....Նա այն բանաստեղծն էր, որ հայ լեզուն հասցրել է մի զարմանալի նրբութեան եւ կատարելութեան՝ տալով նրան արտայայտելու մոգական

կարողութիւն, նա, որի երգերն իրենց անկեղծ, լուսեղէն զգացումներով ու հմայիչ երաժշտականութեամբ դիւրում են ամէն մի կիրթ մարդու...»:

Իսկ այսօ՞ր: Այսօր մեզանից քանի՞սը կ'ունենայ Եղիշէ Չարենցի զգացողութիւնը, երբ Տէրեանից մի բանաստեղծութիւն, մի տող, մի արտայայտութիւն ընկնի ձեռքը: Իսկ Չարենցն ի՞նչ ակնածանքով է գրել. «Մի զարմանալի՛ քնքուշ եւ խնդազին զգացմունք եմ ունենում իւրաքանչիւր անգամ, երբ յիշում եմ, որ այնտեղ, գրասեղանիս դարակում պահուած են Տէրեանի – հասկանո՞ւմ էք – իսկական նրա ձեռագրերը....նրա ձեռքով գրուած այդ թրթիկները....Երբ անչափ տխուր եմ լինում – հանում եմ եւ՝ նայում....Կարծես արեգակն է պահուած իմ գրասեղանի դարակում....»:



Դասական դառնալու չափանիշներից մեկն էլ այն է, թե որքանով ժամանակավրէպ չեն տուեալ անհատի գրածները: Այս առումով Վահան Տէրեանի պոեզիան, մանաւանդ նրա հրապարակախօսական յօդուածները, ելոյթներն ու նամակները բնաւ էլ միայն իր ապրած ժամանակաշրջանին չեն վերաբերում, դրանք արդիական են այսօր էլ, երբ մեր անկախ երկիրը Եւրախորհրդի անդամ է եւ Եւրամիութեանը անդամակցելու յայտ է ներկայացնում: Ահաւասիկ, Տէրեանի մտորումը. «Եւրոպական ազդեցութիւնն ի՞նչ հետեւանք կարող է տալ: Երկու հետեւանք կարող է լինել: Մէկը այն է, որ մենք կարող է ձուլուենք, այսինքն կը կորցնենք մեր կուլտուրական առանձնութեան գործօնները, կը կորցնենք մեր լեզուն եւ կը դառնանք մի ապագային մասսա: Կամ թէ չէ, կը զարգացնենք մեր՝ ամենից առաջ լեզուն, յետոյ միւս ազգային կուլտուրան, կը մտնենք եւրոպական ազգերի շարքը իբրեւ կուլտուրական մի ազգ...»:

Այժմեակա՞ն են սրանից մօտ հարիւր տարի առաջ ասուած նրա այս խօսքերը: Անշուշտ: Տէրեանը մեծ յոյսեր էր կապում մտաւորականների հետ, նրանց առողջ մտածողութեան, ազգասէր պահուածքի հետ. « Այդ ինտելիգենցիան է, որ պիտի հարթի մեր գրականութեան նոր ուղին, նա է, որ պետք է մղի այդ գրականութիւնը նեղ ու անձուկ ազգային-կղերական բանտից դէպի իսկական արուեստի անձայրածիր լայնութիւնը»:

....Ականջալուր լինենք, ուրեմն, Վահան Տէրեանին, չքաշուենք նրանից սովորել, մշտապէս մեր սեղանին ունենանք նրա գրքերը՝ մեզ ուղեկից, մեզ սեր ու քնքշանք բերող, հայրենասիրութեան կոչող, հայրենիքի ներկայի ու ապագայի համար մտահոգ, սրտակից կեցուածք տրամադրող....հարազատ պոեզիա, խոհաիմաստասիրական խօսքեր, նամակներում ու հրապարակախօսական յօդուածներում արտայայտուած մտքեր՝ գրուած ու ասուած հայրենի գրականութեան ու մշակոյթի ներկայով ու ապագայով մտահոգ մարդու վերաբերմունքով: Այդ նամակներում կարօտն է իր հարազատ մարդկանց հանդէպ, հայ գրականութեան ու մշակոյթի զարգացմանը իր նուիրումը բերելու պատրաստակամութիւնը, յաճախ նաեւ արդարացի վրդովմունքը, երբ ազգային արժէքների պահպանման, դրանց հարստացման հարցում անտարբերութիւն է նկատում: Այդ նամակներում նաեւ խնդրանքի պէս յորդոր կայ՝ պահպանենք մեր գրականութեան մեծերին, ապրենք նրանց ոգու, նրանց մտքերի, նրանց մեծութեան լոյսի մէջ: Ապրենք ուրիշ, բարձր զգացմունքների եւ մաքուր խոհերի աշխարհում:

Վահան Տէրեանի աշխարհն այդպիսին էր ու այդպիսին է՝ իր երագածի, իր նկարագրածի հանգոյն, եւ այդ աշխարհին հաղորդուելու միջոցներից մէկը հայ մեծանուն պոետի քնարը մեր սրտին մօտ պահելն է:

....Շնորհակալ մնանք Տէրեանին ու մեր բոլոր այն Մեծերին, որոնց լոյսի ճառագումն այսօր էլ մեզ ուղեկից է: Փայփայենք, գուրգուրենք ու պահպանենք մեր մեծերին հաղորդուելու հրաշք իրողութիւնը, որից մեզ բաժին կը հասնի, Չարենցի բնորոշմամբ, մի զարմանալի՝ քնքուշ եւ խնդազին զգացմունք....

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՊԻԿԵԱՆ



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

Անուրջն ու հեքիաթը անբաժան են մարդուս հոգիէն...որ կը սիրէ երագել, թռիչք տալ իր երեւակայութեան, ազատ արձակել հոգին՝ առօրեայ տաղտկալի կեանքէն, տեսակ-տեսակ մտմտութիւնէն, մանրութիւնէն....եւ թեւածել, ճախրել տիեզերական անհունին մէջ....Հոգին երբեք չի սիրեր բանտուիլ, սահմանափակուիլ....Ազատ ու լայնարձակ տարածքն է անոր բնակավայրը...իսկ անուրջն ու հեքիաթը այդ աշխարհը կ'ընծայեն անոր....

.....

Առանց Իտէալի կամ Իտէալներու, մարդկային կեանքը պիտի ըլլար գետնամած գոյութիւն մը, քանզի այդ իտէալներն են՝ բարիի, գեղեցիկի, ճշմարիտի, անպայմանական, անշահախնդիր սիրոյ...., որոնք թեւ ու թռիչք կու տան հոգիին, կը դառնան կեանքի նպատակ ու իմաստ....Բայց ներկայ աշխարհի նիւթապաշտ, եսամոլ եւ շահամոլ դրուածքին մէջ, այդ իտէալները կը դառնան անհասանելի կապոյտ թռչուն, որուն մասին կարելի է միայն երագել եւ անով ներշնչուիլ....

.....



Թող միտքերդ ճախրեն անհունին մէջ՝ ազատ ու անարգել....Մի՛ սանձեր անոնց թռիչքը՝ դարէ-դար դիզուած նախապաշարումներով, կարծրատիպերով, կաղապարներով.... կամ՝ մտքի ծուլութեամբ թէ՛ ստրկամտութեամբ.....Ազատ միտքը մեծագոյն հարստութիւն է, որով օժտուած է

ամէն մարդ՝ անկախ իր զանազան-զարմանազան պատկանելիութիւններէն...: Բայց շա՛տ-շա՛տեր ինքնակամ զայն կը զիջին ուրիշէն կուրօրէն որդեգրուած միտքերու....քանզի կը նախընտրեն ստրուկ ապրիլ, քան՝ ստանձնել Ազատ Մտքի կամ Ազատ Մտածելու Պատասխանատուութիւնը....

.....

Կեանքը անկաղապար է, բայց մարդը սովորաբար կաղապար կը հագցնէ անոր, զայն սահմանափակելով, զայն պարագծելով...., որպէսզի կարենայ զայն կառավարել, որպէսզի կարենայ իր հակակշիռին ենթարկել զայն....Ի վերջոյ, սակայն, այդ սահմանափակ կեանքը կը դառնայ այնքա՛ն տաղտկալի, այնքա՛ն ձանձրացուցիչ, նոյնիսկ՝ հեղձուցիչ, տեսակ մը բանտ հոգիին համար....Կեանքի արժէքը անոր անսահմանութեան մէջ է....

.....

Կաղապարուած, անազատ միտքը խորթ աչքով կը նայի ազատ, աննախապաշար մտքին, չի հանդուրժեր զայն եւ հազար ու մէկ պատրուակ կը փնտռէ վարկաբեկելու համար



զայն....Սողունը պիտի կարենա՞ր երբեւէ նայիլ ազատ ճախրող արծիւին, հիանալ անով, թեւեր առնել եւ անոր նման թռչիլ լայնարձակ տարածութեան մէջ....

.....

Ամէն անհատ աշխարհ մըն է, որ առեղծուածային է, ինչպէս տիեզերքը....Իւրաքանչիւր հանդիպում մարդկանց հետ անչափ կը հարստացնէ մեր ներաշխարհը, նոր մտահորիզոններ կը բանայ մեր տեսադաշտին առջեւ, նոր կարելիութիւններ կ'ընծայէ մարդաճանաչման եւ աշխարհաճանաչման....կը հարստացնէ մեր աշխարհընկալումը, աշխարհայեացքը....: Նոյն մթնոլորտի եւ նոյն շրջապատի մէջ մնալով, մարդը որոշապէս կը լճանայ, կը ճահճանայ...: Ահա թէ ինչու կարելոր է ժամանակ առ ժամանակ փոխել շրջապատը, միջավայրը, ուր կ'ապրինք, որպէսզի նորանոր խթաններ ստանանք նորովի մտածելու կեանք-առեղծուածին մասին....եւ չկաղապարուինք, չքարանանք....

.....

Ազատութիւնը երբեք պատրաստ չի հրամցուիր արծաթեայ սկուտեղի վրայ....Զայն պիտի նուաճել ամէն պահ, յաղթահարելով քեզ ստրկացնելու միտող մութ բնագոյներն ու կիրքերը, նեղ-անձնական նկատառումները, քէնն ու ռիսկալորութիւնը, նախանձն ու ատելութիւնը.... արտաքին փայլով շաքարապատուած սուտն ու կեղծիքը եւ այսպէս շարունակ...: Ամբողջ կեանք մը տեւող եւ դադար չունեցող գործընթաց է այս Ազատագրումը, որուն ամէն մէկ պահը յաղթանակ մըն է, Սիզիֆոսեան ժայռի բարձրացումը բարձունքն ի վեր, ուրկէ ան պիտի թաւալի վար, եւ կրկին ու կրկին բարձրացուի՝ աննկուն կամքով, անկոտրում ոգիով...., քանզի այդ ժայռի բարձրացումն է որ նպատակ կու տայ կեանքիդ, որքան ալ անհեթեթ հնչէ ա՛յս միտքը....հեւք կու տայ սրտիդ, կորով կու տայ բազկիդ եւ ազատութեան շունչն ու ճաշակը կը պարզեւէ ամէն պահ.....

.....

Առեղծուածային մարդ արարած....որ ազատութեան մասին կ'երագէ շարունակ, բայց կը խորշի անոր պատասխանատուութենէն, ազատութիւնը փոխանակելով մտքի գերութեան հետ....Անհասկնալի մարդ արարած, որ «մտածող եղէգ» է ի սկզբանէ, բայց կը թողու որ ուրիշներ մտածեն իր փոխարէն....Զարմանալի մարդ արարած, որ մշտապէս կը զանգատի չար բախտէն, երբ իր «ազատ» կամքով կ'ընտրէ զայն շատ յաճախ, գիտակցաբար թէ անգիտակցաբար....

.....

Ինքնաճանաչման ընթացքը համակ կեանքի մը ուղին է, որ վերջ չունի, քանզի ամէն օր բան մը կը յայտնաբերենք մեր մարդկային էութենէն....գիտակցութեան նոր կայծ մը, զգացումի նոր թրթիռ մը, հոգիի նոր թռիչք մը, ապրումի նոր ոլորտ մը....եւ այսպէս վերստին ու վերստին կը ճանչնանք մենք զմեզ....կը վերանորոգուինք եւ կը հասուննանք ալ ներքնապէս....Անծիր ու անպարագիծ է մեր ներաշխարհը, որպէս տիեզերք...

.....



Ապրելով կը սորվիս վստահիլ լոկ սեփական ոյժերուդ, չապաւինիլ ծանօթ-բարեկամի զօրավիգին....Ապրելով կը պնդանաս, կը զօրանաս, կաղնիին նման հաստարմատ, որ չի տատանուիր փշոդ քամիներէն...Ապրելով կը սորվիս արժեւորել դէմքերն ու դէպքերը, որպէս անցողիկ ակնթարթներ՝ ժամանակի լայնահուն տարածութեան մէջ... Կը դառնաս աւելի հանդուրժող, համբերատար, լայնախոհ կեանքի երեւոյթներուն նկատմամբ, որոնք քամիին նման կու գան ու կ'երթան անհետ....Կը սորվիս տեսնել ու ընկալել ամէն ինչ, որպէս հիւլէներ տիեզերական անսահմանութեան մէջ...: Այս բոլորը էական մասն են այն Իմաստութեան, որ կու գայ ժամանակին հետ, եւ զոր կարելի չէ սորվիլ միայն գիրքերէն, կամ գրասեղաննէու վրայ....եւ որուն համար կը վճարես յաճախ գուցէ շատ աւելի, քան ուսման բարձր վկայականի մը ձեռքբերման....

.....

Ծերանալով մարդիկ կը մանկանան, կը վերադառնան իրենց հարազատ էութեան, կը վերագտնեն իրենց հոգին, որ կը թուէր ժանգոտած ըլլալ առօրեայ հեւք ու վազքի տաղտուկէն, ընկերութեան պարտադրած ձեւականութիւններէն, սին բարքերէն....Կ'ըմբռնեն որ ա՛յն ինչ կը մնայ ժամանակէն վեր՝ մարդկային սիրտն է, սէրը, փոխյարաբերութեանց անկեղծութիւնը, ջերմութիւնը....Եւ դարձեալ մանկան նման կը կառչին մարդէն, կը դառնան անկեղծ, սիրալիր իրենց խօսք ու զրոյցին մէջ....Մարդ էակը իմաստուն կը ծնի, իմաստուն ալ կը մեռնի....Իսկ կեանքի ընթացքը՝ իր ոլորապտոյտին մէջ, հոգին կը հեռացնէ մարդ էակէն շատ յաճախ....

.....

Ճշմարիտ սէրը կեանքն իսկ է, անոր բուն բովանդակութիւնը, անոր խորապրումը, անոր գոյիմաստը....Սէր որ կը տրուի անանձնական՝ բոլորին, սիրուած անձին, ընտանիքին, ազգին, հայրենիքին ու համայն մարդկութեան....Սէրը անսպառ է եւ որքան տրուի՝ չի սպառիր, այլ նոյնիսկ կը բազմապատկուի, կ'ազնուանայ, կը վսեմանայ...մարդ էակը մօտեցնելով իր Արարչին....Սէրը, ճշմարիտ սէրը անպայմանական է, չազդուիր արտաքին ազդակներէ ու պայմաններէ....Ահա այս Սէրն է, որ տակաւ կը նուազի՝ նիւթապաշտ եւ եսամոլ մեր դարուն....


.....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ – ՓԵՏՏՐՈՒԱՐ 2015

ԷԶԵՐ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵՆԷՆ

Թարգմանութեամբ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ



Պարբերաբար, մեր ընթերցողներուն պիտի հրամցնեմ՝ Էզեր Արեւմտեան Մտածողութենէն, տարիներու ընթացքին իմ կողմէ՝ անգլերէնէ հայերէնի թարգմանուած յայտնի փիլիսոփաներու երկերէն Էզեր, նպատակ ունենալով իմ համեստ լուման ներդնել միասնաբար հայերէն մտածելու յոյժ կարեւոր նպատակին կենսագործման: Էզերու ընտրութիւնը պիտի ըլլայ ո՛չ ժամանակագրական հերթականութեամբ, ո՛չ ալ նիւթերու որեւէ շաղկապուածութեան հիմքի վրայ: Այս թիւով, պիտի ուզէի թարգմանաբար ներկայացնել Քարլ Փոփըրի «Ազատ Բանավէճի Ազատական Տեսութիւնը» գրութիւնը: Ե. Գ.

ԱԶԱՏ ԲԱՆԱՎԷՃԻ ԱԶԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

KARL R. POPPER (1902-1994)

Հատուած՝ Conjectures and Refutations Գիրքէն

Թարգմանութեամբ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

Մտածման ազատութիւնը եւ ազատ բանավէճը Ազատական վախճանական արժէքներ են, որոնք իսկական կարիքը չունին յաւելեալ արդարացման: Այսուհանդերձ, անոնք կրնան նաեւ գործնականօրէն արդարացուիլ, ըստ անոնց բերած նպաստին՝ ճշմարտութեան որոնման մէջ:

Ճշմարտութիւնը բացայայտ չէ. եւ դիրին չէ հասնիլ անոր: Ճշմարտութեան փնտռտուքը կը պահանջէ առնուազն՝

ա/ Երեւակայութիւն

բ/ Փորձարկում

գ/ Աստիճանական յայտնաբերումը մեր նախապաշարումներուն՝ ա/ի եւ բ/ի միջոցաւ եւ քննադատական բանավէճով:

Արեւմտեան խոհապաշտ աւանդութիւնը, որ կը ստացուի Յոյներէն, աւանդութիւնն է քննադատական բանավէճին – քննելու եւ փորձելու առաջադրութիւնները կամ տեսութիւնները, փորձելով զանոնք հերքել: Այս քննադատական բանական մեթոտը պէտք չէ թիրքմբոնուի որպէս փաստարկումի մեթոտ մը, այսինքն, ճշմարտութիւնը վերջնականօրէն հաստատելու մեթոտ մը: Ոչ ալ մեթոտ մըն է ան, որ մշտական համաձայնութիւն ապահովէ: Անոր արժէքը կը կայանայ, աւելի շատ, այն փաստին մէջ,



թէ՝ բանավեճին մասնակիցները պիտի փոխեն, որոշ չափով, իրենց միտքերը եւ բաժնուին իրարմէ՝ առաւել իմաստնացած:

Յաճախ հաստատուած է որ վիճաբանական քննարկումը կարելի կ'ըլլայ կայացնել միայն այն մարդոց միջեւ, որոնք ունին հասարակաց լեզու մը եւ կ'ընդունին հասարակաց հիմնական ենթադրութիւններ: Կը խորհիմ որ ատիկա սխալ է: Պահանջուածը՝ ընդամենը, սորվելու պատրաստակամութիւն մըն է՝ բանավեճի այլ մասնակիցէն, եւ կ'ընդգրկէ անկեղծ փափաք մը հասկնալու, թէ ինչ կը նպատակադրէ ըսել ան: Եթէ այս պատրաստակամութիւնը կայ, բանավեճը կ'ըլլայ այնքան արդիւնաւէտ, որքան տարբեր ըլլան մասնակիցներու միջավայրերը, ուրկէ կու գան անոնք: Այսպէս, վիճաբանական քննարկման մը արժէքը կախեալ է, մեծաւ մասամբ, մրցակից տեսակէտներու այլազանութենէն: Եթէ Բաբելոնեան Աշտարակ մը եղած չըլլար, հարկ էր հնարել զայն: Ազատականը չերագեր՝ կարծիքներու կատարեալ համաձայնութեան մը մասին: Ան միայն կը յուսայ ունենալ կարծիքներու փոխադարձ հարստացում եւ, ասոր իբր հետեւանք՝ զաղափարներու աճում: Նոյնիսկ եթէ լուծենք խնդիր մը, որ արժանանայ ընդհանուր գոհունակութեան, զայն լուծելով կը ստեղծենք շատ մը նոր խնդիրներ, որոնց մասին անհամաձայն ըլլանք որոշապէս: Ափսոսանք յայտնելու չէ անոր համար:

Թէեւ ճշմարտութեան փնտռութիւնը՝ ազատ բանական վիճաբանութեամբ, հանրային արարք մըն է, գոյութիւն չի տար ան հանրային կարծիքի: Թէպէտեւ հանրային կարծիքը կրնայ ազդուիլ գիտութենէ եւ կրնայ դատել գիտութիւնը, արդիւնքը չէ ան գիտական բանավեճի:

Բանական վիճաբանութեան աւանդութիւնը, սակայն, կը ստեղծէ, քաղաքական բնագաւառին մէջ, բանավեճով կառավարուելու աւանդոյթը եւ անոր հետ միասին՝ ուրիշ տեսակէտ մը լսելու սովորութիւնը, աճումը արդարութեան զգացողութեան մը եւ փոխհամաձայնութեան գալու պատրաստակամութիւնը:

Մեր յոյսն է, հետեւաբար, որ աւանդոյթներ, փոխուելով եւ զարգանալով քննադատական բանավեճի ազդեցութեան տակ եւ ի պատասխան նոր խնդիրներու մարտահրաւերին, կարենան մեծաւ մասամբ փոխարինել ինչ որ սովորաբար կը կոչուի «հանրային կարծիք» եւ կարենան ստանձնել այն դերակատարութիւնը, զոր հանրային կարծիքը կ'ենթադրուի կատարել:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ՝

ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒԶԵԼԵԱՆԻ

«ԿԸ ԽՕՍԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ» ՀԱՏՈՐԸ – ՊԷՅՐՈՒԹ 2014

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ասատուր Կիւզելեան – Սիմոն Սիմոնեան

Ասատուր Կիւզելեան – Վահրամ Մավեան